**Հավելված**

*Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի*

*հոկտեմբերի 31-ի թիվ 114-Ա որոշման*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

# ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս ……………………………………………………….……………… էջ 2
2. Ամփոփագիր …………………………………………………………….…………..… էջ 4
3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ ……………………………………..…. էջ 5
4. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման ֆինանսական ցուցանիշներ… էջ 6
5. Արձանագրված անհամապատասխանություններ …….…………………………..…. էջ 7
6. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր ……………………………….…. էջ 11
7. Հետհսկողական գործընթաց ……………………………………………….............. էջ 19
8. Առաջարկություններ …………………………………………………….................. էջ 20
9. Հավելվածներ և այլ տեղեկատվություն ………………………………………….…. էջ 21

# 1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

| | |
|---|---|
| Հաշվեքննության հիմքը[1] | Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունում 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքը հաստատելու մասին» № 71-Ա որոշում: |
| Հաշվեքննության օբյեկտը | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն: |
| Հաշվեքննության առարկան | 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն: |
| Հաշվեքննության առարկայի չափանիշները | «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Հայաստանի Հանրապետության 2024թ. պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ. փետրվարի 28-ի «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը հաստատելու մասին» № 201-Լ որոշում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. հուլիսի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիրը հաստատելու մասին» № 893-Լ որոշում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021թ. հունիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրաժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023թթ. ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ. մարտի 29-ի № 361-Լ, 2019թ. ապրիլի 4-ի № 362-Լ և 2019թ. մարտի 7-ի № 212-Լ որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» № 927-Լ որոշում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Տնտեսության արդիականացման նպատակային ծրագրերը հաստատելու մասին» № 355-Լ որոշում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ. հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի |

[1] *«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն Ընթացիկ եզրակացությունն օգտագործվում է ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմելու համար:*

| | |
|---|---|
| | լիզինգի աջակցության ծրագիրը հաստատելու մասին» № 105-Լ որոշում: |
| Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը | 2024 թվականի հունվարի 1–ից մինչև 2024 թվականի հունիսի 30–ը: |
| Հաշվեքննության կատարման ժամկետը | 2024 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 31-ը: |
| Հաշվեքննության մեթոդաբանությունը[2] | Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն է իրականացվել համապատասխան մեթոդաբանությունների և պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների ու տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն: |
| Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում | Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի հինգերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Եղիշե Սողոմոնյանը: |

[2] *«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հաշվեքննիչ պալատի հաշվեքննությունների մեթոդաբանությունները հիմնված են Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) սկզբունքների, ստանդարտների ու ուղեցույցների վրա:*

## 2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) 2024թ. պետական բյուջեի վեց ամիսների կատարման ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությամբ արձանագրվել են հետևյալ ուշագրավ փաստերը.

1. Պետական բյուջեի (1187) «Գյուղատնտեսության արդիականացման ծրագրի» շրջանակում առանձին միջոցառումներով լիզինգառուների կողմից ներգրավված վարկերը սուբսիդավորվել են չպահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով՝ լիզինգառուներին տվյալ միջոցառման շահառու ճանաչելու համար սահմանված պայմանները:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության առաջնահերթությունների հիման վրա տնտեսության տարբեր ճյուղերում որոշակի պայմաններին բավարարող տնտեսավարողների կողմից ներգրավվող վարկային միջոցների բեռը, ժամանակավորապես «թեթևացնելու» եղանակով, տվյալ ոլորտի խթանման նպատակով պետական բյուջեով նախատեսված միջոցառումները «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի (այսուհետ՝ ԳՖԿ) մասնակցությամբ՝ կազմակերպվում են առանց ինստիտուցիոնալ ներքին հսկողության մեխանիզմների գործածության, ինչը հանգեցնում է առանձին տնտեսավարողների այնպիսի ծրագրերի ֆինանսավորման, որոնք Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով ճանաչված չեն տվյալ ծրագրի պայմաններին բավարարող շահառուներ:

# 3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ[3]

Նախարարության (1104) «Գիտելիքահենք, նորարարական տնտեսությանը և փոքր ու միջին ձեռնարկատիրությանը աջակցություն» ծրագրի (12001) «Տնտեսության արդիականացմանը պետական աջակցության շրջանակում արտադրական հնարավորությունների արդիականացման և նոր տեխնոլոգիաների ներմուծումը խթանելու նպատակով, տնտեսավարողների կողմից ներգրավվող վարկերը մատչելի պայմաններով հասանելի դարձնելուն ուղղված սուբսիդավորման» ծախսային միջոցառման բյուջետային հատկացումների վերաբերյալ հայցված տեղեկատվությունը Նախարարությունը չի տրամադրել՝ բանկային գաղտնիք հանդիսանալու պատճառաբանությամբ: Տեղեկատվության բացակայությունն անհնարին է դարձրել տվյալ ծրագրային միջոցառման գծով 2024թ. վեց ամիսների պետական բյուջեից հատկացված 6,463,328.20 հազ. դրամ բյուջետային միջոցների օգտագործման օրինականության գնահատումը: Նշված գումարը կազմում է հաշվեքննության առարկային վերաբերելի տեղեկատվության ներկայացուցչական ընտրանքի 26.2%-ը:

Հաշվեքննության արդյունքներով արձանագրված անհամապատասխա-նությունները ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 5-րդ, իսկ այլ փաստերը՝ 6-րդ բաժիններում:

Հաշվեքննությամբ խեղաթյուրումներ չեն արձանագրվել:

Հաշվեքննիչ պալատի 2024թ. հոկտեմբերի 18-ի ՀՊԵ/01/646-2024 գրությամբ Նախարարության 2024թ. պետական բյուջեի վեց ամիսների կատարման ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության արձանագրության վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները, առարկությունները (04.11.2024թ. № 01/22212/-2024 գրություն) և դրանց առնչությամբ հաշվեքննողների մեկնաբանությունները ներկայացված են համապատասխան բաժիններում:

[3] *Հաշվեքննությունը նպատակ է հետապնդել հաշվեքննության առարկային վերաբերելի տեղեկատվության ներկայացուցչական ընտրանքով (100%-ից փոքր) ձեռք բերել բավարար, համապատասխան հաշվեքննության ապացույցներ, որոնց կուտակմամբ ձևավորվելու է պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ եզրակացությունը՝ ներառյալ հաշվեքննության կարծիքը, որով պետք է արտահայտվի ողջամիտ (ոչ բացարձակ) հավաստիացում առ այն, թե պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը, բոլոր էական առումներով, ներկայացնու՞մ է արդյոք ՀՀ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ճշմարիտ ու իրական պատկերը:*

# 4. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Նախարարության, որպես ծրագրերի կատարող, 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների պլանով նախատեսվել է 41,833,515.30 հազ. դրամի ծախս, ճշտված պլանը կազմել է 42,178,815.73 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 27,792,661.12 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 27,346,988.28 հազ. դրամ:

Նախարարության 2024թ. պետական բյուջեի վեց ամիսների ծախսային ծրագրերի ֆինանսական ամփոփ ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Նախարարության 2024թ. պետական բյուջեի վեց ամիսների ծախսային ծրագրերի ֆինանսական ամփոփ ցուցանիշներ

*(հազար դրամ)*

| ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | Հաշվետու ժամանակահատվածի պլան | Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան | Դրամարկղային ծախս | Փաստացի ծախս |
|---|---|---|---|---|
| Ընդամենը | 41,833,515.30 | 42,178,815.73 | 27,792,661.12 | 27,346,988.28 |
| (1015) «Սոցիալական փաթեթների ապահովում» | 0 | 10,020.00 | 9,765.00 | 11,814.00 |
| (1022) «Գյուղատնտեսության խթանման ծրագիր» | 11,107,825.90 | 11,002,873.90 | 4,579,467.65 | 4,511,842.61 |
| (1058) «Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ» | 1,541,304.60 | 1,543,888.43 | 1,025,886.93 | 1,121,517.49 |
| (1059) «Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն» | 79,504.10 | 679,504.10 | 57,954.72 | 73,218.80 |
| (1067) «Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում» | 155,086.00 | 155,086.00 | 6,255.00 | 6,255.00 |
| (1086) «Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում» | 128,090.00 | 128,090.00 | 11,561.56 | 13,730.74 |
| (1104) «Գիտելիքահենք, նորարարական տնտեսությանը և փոքր ու միջին ձեռնարկատիրությանը աջակցություն» | 7,869,800.00 | 7,869,800.00 | 7,679,049.32 | 7,143,762.14 |
| (1116) «Անասնաբուժական ծառայություններ» | 1,328,700.00 | 2,348,511.90 | 1,714,627.49 | 1,271,547.84 |
| (1162) «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր» | 98,113.10 | 98,113.10 | 90,479.24 | 103,297.43 |
| (1165) «Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր» | 2,465,432.80 | 2,149,599.50 | 113,882.53 | 383,796.19 |
| (1187) «Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր» | 12,353,513.00 | 11,487,183.00 | 10,148,945.84 | 10,475,909.80 |
| (1190) «Զբոսաշրջության զարգացման ծրագիր» | 4,706,145.80 | 4,706,145.80 | 2,354,785.84 | 2,230,296.24 |

# 5. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Նախարարության (1187-12003) «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիր» միջոցառման մասով.*

5.1 Առկա են անհամապատասխանություններ Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ. հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիրը հաստատելու մասին» № 105-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում 1) հավելվածի 12-րդ կետի, 13-րդ կետի 2-րդ ենթակետի և «Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի տրամադրման և աջակցության պայմանները» №1 Աղյուսակի (այսուհետ՝ №1 Աղյուսակ) հետ:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել են հաշվետու ժամանակաշրջանում տրամադրված թվով 364 լիզինգներից (ընդամենը՝ 1,663,244.50 հազ. դրամ) 115 լիզինգի պայմանագրեր (ընդամենը՝ 731,805.80 հազ. դրամ): Պարզվել է, որ լիզինգի գործընթացը չի իրականացվել սահմանված չափորոշիչներին համապատասխան:

Մասնավորապես՝

5.1.1 Որոշում 1-ի հավելվածի 13-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Լիզինգի գործընթացն իրականացվում է ըստ ամիսների՝ մայր գումարի հավասարաչափ վճարման եղանակով»:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ թվով չորս ՖԿ-ների կողմից տրամադրված 46 լիզինգներից 43 դեպքում վճարումները նախատեսվել և իրականացվում են ոչ թե մայր գումարի, այլ վճարման ենթակա (ներառյալ՝ մայր գումար և տոկոսավճար) ընդհանուր գումարի հավասարաչափ վճարման եղանակով: Նշված եղանակով հաշվարկված ընդհանուր՝ հետևաբար նաև պետական բյուջեից սուբսիդավորվող տոկոսագումարը ավելին է, քան մայր գումարի հավասարաչափ վճարման դեպքում: Մասնավորապես՝ «Ք.Ա.Կ.» ՈՒՎԿ ՓԲԸ թվով 17 լիզինգներից՝ 14-ի, «Ֆ. Կ. Ա.» ՈՒՎԿ ԱԿ թվով 14 լիզինգներից՝ 14-ի, «Գ. Կ.» ՈՒՎԿ ՓԲԸ 12 լիզինգներից՝ 12-ի և «Կ. Կ.» ՈւՎԿ ՓԲԸ թվով 3 լիզինգներից՝ 3-ի դեպքերում (ցանկը տրամադրվել է Նախարարությանը):

***<u>Նախարարության առարկությունները և բացատրությունները</u>.***

*«Ծրագրի շրջանակում հաշվեքննության արդյունքում 4 ՄՖԿ-ներում հայտնաբերված ոչ հավասարաչափ մարումների գրաֆիկները արդեն իսկ փոխվել են ՄՖԿ-ների կողմից, համապատասխանեցվել ծրագրի պահանջներին, և վերահաշվարկի արդյունքում հետ է վերադարձվել ավել սուբսիդավորված գումարները: Կից ներկայացվում է վճարման անդորրագրերը, ճշգրտված մարման գրաֆիկները կներկայացվի էլեկտրոնային կրիչով:»*

***<u>Հաշվեքննողների մեկնաբանությունը</u>.***

*Ընդունվել է ի գիտություն: Հաշվի առնելով անհամապատասխանության համապարած բնույթը, հաշվեքննողները հարկ են համարում նշել, որ տվյալ*

*ծախսային միջոցառման շրջանակներում տրամադրված բոլոր լիզինգները ենթակա են Նախարարության կողմից գնահատման՝ Որոշում1-ի պայմաններին համապատասխանության տեսանկյունից և անհրաժեշտության դեպքում՝ վերահաշվարկի:*

5.1.2 Որոշում 1-ի №1 Աղյուսակի 4-րդ կետով սահմանվել է լիզինգի տոկոսադրույքը`«տարեկան փաստացի տոկոսադրույք՝ մինչև 14 տոկոս», իսկ 5-րդ կետով՝ «լիզինգի տոկոսադրույքը սուբսիդավորվում է այնպիսի չափաքանակով, որ լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 2 տոկոս»:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ թվով երեք ՖԿ-ների կողմից տրամադրված 40 լիզինգներից 24 դեպքում տարեկան փաստացի տոկոսադրույքը գերազանցում է սահմանված 14%-ը: Մասնավորապես՝ «Ա. Լ. Ք.» ՈՒՎԿ ՓԲԸ թվով 23 լիզինգներից 19-ում, «Կ. Կ.» ՈւՎԿ ՓԲԸ թվով 3 լիզինգներից 3-ում և «Ֆ. Կ. Ա.» ՈՒՎԿ ԱԿ թվով 14 լիզինգներից 2-ում (ցանկը տրամադրվել է Նախարարությանը):

***<u>Նախարարության առարկությունները և բացատրությունները</u>.***

*«Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանության կարգավորման նպատակով մշակվել և շրջանառվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի N 105-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:»*

***<u>Հաշվեքննողների մեկնաբանությունը</u>.***

*Ընդունվել է ի գիտություն:*

*Նախարարության (1187-12004) «Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիր» միջոցառման մասով.*

5.2 Առկա է անհամապատասխանություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիրը հաստատելու մասին» № 893-Լ որոշմամբ (այսուհետ՝ Որոշում 2) հաստատված ծրագրի 40-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների հետ:

Համաձայն Որոշում 2-ի 40-րդ կետի 1-ին ենթակետի՝ «ծրագրի շրջանակներում լիզինգի պայմանագիրը կնքվում է մինչև 5 տարի ներառյալ մարման ժամկետով»:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ «Ա.» ՍՊԸ -ի և «Ա. Լ.» ՎԿ ՓԲԸ-ի միջև 17.11.2023թ.-ին կնքվել է 6,944.31 հազ. դրամ գումարով № 2311 695 լիզինգի պայմանագիրը, որով մարման ժամկետը սահմանվել է 6 տարի:

***<u>Նախարարության առարկությունները և բացատրությունները</u>.***

*«ԳՖԿ-ի կողմից աշխատանքային կարգով տրամադրված տեղեկատվության համաձայն «Ա.» ՍՊԸ -ի և «Ա. Լ.» ՎԿ ՓԲԸ-ի միջև 17.11.2023թ.-ին կնքված 6,944.31 հազ. դրամ գումարով № 2311 695 լիզինգի պայմանագրի ժամկետը*

*համապատասխանեցվել է ծրագրով սահմանված պահանջին: Կից ներկայացվում է վերը նշված պայմանագրի հավելվածի պատճենը՝ վարձավճարների վճարման ժամանակացույցի վերաբերյալ:»*

***<u>Հաշվեքննողների մեկնաբանությունը</u>.***

*Ընդունվել է ի գիտություն:*

5.3 Առկա է անհամապատասխանություն Որոշում 2-ով հաստատված ծրագրի 40-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ:

Համաձայն Որոշում 2-ի 40-րդ կետի 2-րդ ենթակետի՝ «տրամադրվող լիզինգների առավելագույն տոկոսադրույք չի սահմանվում: Սուբսիդավորվում է Հայաստանի Հանրապետության դրամով տրամադրված լիզինգի 10, արտարժույթով տրամադրված լիզինգի՝ 6 տոկոսային կետը, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար՝ Հայաստանի Հանրապետության դրամով տրամադրված լիզինգի 12, արտարժույթով տրամադրված լիզինգի՝ 7 տոկոսային կետը, եթե ձեռք բերվող սարքավորումները շահագործվելու են նույն վայրերում»:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ «Ա.» ՍՊԸ -ի և «Ա. Լ.» ՎԿ ՓԲԸ-ի միջև 17.11.2023թ.-ին կնքվել է 6,944.31 հազ. դրամ գումարով № 2311 695 լիզինգի պայմանագիրը, որով սուբսիդավորվող տոկոսային կետը սահմանվել է 13%:

***<u>Նախարարության առարկությունները և բացատրությունները</u>***

*«ԳՖԿ-ի կողմից աշխատանքային կարգով տրամադրված տեղեկատվության համաձայն «Ա.» ՍՊԸ -ի և «Ա. Լ.» ՎԿ ՓԲԸ-ի միջև 17.11.2023թ.-ին կնքված 6,944.31 հազ. դրամ գումարով № 2311 695 լիզինգի պայմանագրով սահմանված սուբսիդավորվող տոկոսային կետը համապատասխանեցվել է ծրագրով սահմանված պահանջին: Կից ներկայացվում է վերը նշված պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագրի պատճենը:»*

***<u>Հաշվեքննողների մեկնաբանությունը</u>.***

*Ընդունվել է ի գիտություն:*

5.4 Առկա է անհամապատասխանություն «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների հետ:

«Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ներքին աուդիտն իրականացնում են կազմակերպության կառուցվածքում գործող ներքին աուդիտի ստորաբաժանման կամ հրավիրված՝ սույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկված անձինք: Եթե աուդիտն իրականացնում են հրավիրված անձինք, ապա վերջիններս են ապահովում սույն օրենքով աուդիտի

ստորաբաժանման, ներառյալ` ստորաբաժանման ղեկավարի համար սահմանված իրավունքների և պարտականությունների կատարումը»:

Նախարարությունը հաշվետու ժամանակաշրջանում չի ապահովել ներքին աուդիտի գործառույթի իրականացումը:

***Նախարարության առարկությունները և բացատրությունները***.

*Նախարարության կողմից առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:*

# 6. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

6.1 Նախարարության (1187-12002), (1187-12005), (1187-12006) և (1187-12014) ծախսային միջոցառումների իրականացման նպատակը պետական աջակցության տրամադրումն է գյուղատնտեսության ոլորտի շահառուներին՝ հիմնականում այգեհիմնման, կարկտապաշտպան ցանցի, ոռոգման արդիական համակարգի ներդրման աշխատանքների նպատակով ֆինանսական կառույցներից ներգրաված վարկերի տոկոսադրույքների (մասնակի) սուբսիդավորման եղանակով: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նշված ծախսային միջոցառումների շրջանակներում վարկերի տոկոսադրույքների (մասնակի) սուբսիդավորման ձևով ֆինանսավորման չափը հաշվարկվում է հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի № 927-Լ որոշման 1-ին կետով հաստատված ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր 1) 23-րդ կետի 14-րդ ենթակետը, որում սահմանվել է. «Վարկի տոկոսադրույքը հաշվարկվում է մայր գումարի մնացորդի նկատմամբ»:

Ինչ վերաբերում է վարկային պայմանագրերի առավելագույն գումարներին (որից հաշվարկվում է վարկերի տոկոսավճարները), ապա դրանք ստացվում են հողատարածքի մակերեսի և գործունեության տվյալ տեսակի համար նախատեսված միավոր մակերեսի (հա) համար սահմանված ծախսի առավելագույն սահմանաչափի ցուցանիշների արտադրյալից (Ծրագիր 1-ի 23-րդ կետի 7-րդ ենթակետ):

Սակայն ԳՖԿ-ի կողմից Նախարարություն ներկայացվող սահմանված ձևաչափերով ամսական հաշվետվությունները ամբողջական տեղեկատվություն չեն ներառում վարկային պայմանագրերի գումարների ճշտությունը հաշվարկելու համար: Մասնավորապես՝

1) Այգեհիմնումը նախատեսվում է իրականացնել կարկտապաշտպան ցանցով, թե՝ ոչ,

2) Այգեհիմնումը նախատեսվում է իրականացնել տեղական արտադրության տնկանյութերով, թե՝ ոչ,

3) Տոկոսադրույքի չափի որոշման վերաբերյալ հղումը իրավական ակտին, ինչպես նաև նշում, թե առավելագույն չափով պետական աջակցությամբ սուբսիդավորումը տվյալ շահառուին որ արտոնյալ պայմանի բավարարումով է տեղի ունենում,

4) Տարբեր տեսակի այգիները կամ պտղատեսակները, որոնք ունեն պայմանագրի գնի առավելագույն չափի հաշվարկման տարբեր գործակիցներ, հարկավոր է առանձնացնել (օրինակ՝ նշված է՝ կեռաս, նեկտարին, խաղող),

5) Ոռոգման համակարգի դեպքում նշված չէ, թե որ տեսակի ոռոգման համակարգ է նախատեսվում է ներդնել՝ կաթիլային, անձրևացման, թե շարժական, ինչպես նաև ջրավազան նախատեսվում է կառուցել (ընդլայնել), թե՝ ոչ:

6) Վարկի գումարը ավելացվել է ֆինանսական կառույցի գնահատման արդյունքում, թե՝ ոչ:

Վերոնշված գործոնների հիման վրա է որոշվում համապատասխան աշխատանքների իրականացման համար ծախսերի և վարկային պայմանագրերի գումարների առավելագույն չափերը: Վերջինս կարևոր է նաև նրանով, որ ըստ այդ վարկային պայմանագրի գնի, ինչպես նաև մայր գումարի մնացորդի նկատմամբ կիրառվող համապատասխան տոկոսադրույքի չափով հաշվարկվում է պետական աջակցության ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից պահանջվող սուբսիդավորվող գումարը:

***<u>Նախարարության առարկությունները և բացատրությունները</u>***

*«Հաշվետվության այլ նշումներ սյունակում լրացվել է համապատասխան տեղեկատվությունը: 30.09.2024 թվականի դրությամբ ներկայացված հաշվետվություններում արդեն իսկ խմբագրվել է:»*

***<u>Հաշվեքննողների մեկնաբանությունը</u>.***

*Ընդունվել է ի գիտություն:*

6.2 Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից պահանջվող սուբսիդավորվող գումարները փոխանցվում են Նախարարությանը, այնուհետև ԳՖԿ, իսկ հետո՝ ֆինանսական կառույցներ՝ հիմք ընդունելով Նախարարությանը ներկայացված հայտերը, այն դեպքում, որ վարկային տոկոսադրույքի, այնպես էլ ամսական սուբսիդավորման ենթակա տոկոսագումարների համապատասխան հաշվարկները (բանաձևերով) ներկայացված չեն հայտերում, շտեմարաններում կամ հաշվետվություններում:

Բանաձևերով հաշվարկների տեղեկատվության բացակայության պայմաններում ևս ներկայացված հաշվետվությունների տվյալներով հնարավոր չի պարզել անհրաժեշտ հավաստիացումները սուբսիդավորվող գումարների ճշտության վերաբերյալ:

Վերոնշված դեպքերը համատարած են, մի քանի օրինակներ՝

Օրինակ 1 (1187–12014) ծախսային միջոցառում, 2024թ. ապրիլ ամսվա հայտ)

Աղյուսակ 2

Նախարարության (1187–12014) ծախսային միջոցառման հաշվետվության տվյալներ

| Ֆինանսական կառույց | Շահառու | Վարկի պայմանագրային գումար (դրամ) | Հաշվետու ամսվա վերջի դրությամբ վարկի մնացորդ (դրամ) | Վարկի տարեկան տոկոսադրույք (%) | Վարկառուի կողմից վճարված ամբողջ տոկոսագումար՝հաշվետու ամսվա ընթացքում (դրամ) | Սուբսիդավորման ենթակա տոկոսային կետ(%) | Սուբսիդավորման ենթակա տոկոսագումար (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ֆինանսական կառույց 1 «Ա. բանկ» ՓԲԸ | Շահառու 1 «Վ.» ՍՊԸ | 8,400,000,000.00 | 8,400,000,000.00 | 13.10% | 90,443,835.60 | 13.10% | 90,443,835.60 |
| Ֆինանսական կառույց 1 «Ա. բանկ» ՓԲԸ | Շահառու 2 «Ա.» ՍՊԸ | 8,400,000,000.00 | 8,400,000,000.00 | 13.10% | 99,488,219.20 | 13.10% | 99,488,219.20 |

Նույն վարկի մնացորդի գումարի չափն է, նույն տոկոսադրույքները, սակայն սուբսիդավորված գումարները տարբեր են:

<u>Օրինակ 2</u>

(1187-12002) միջոցառում, Ֆինանսական կառույց 2՝ «Հ.» ԲԲԸ, հայտերը 2024թ. հունվարից մինչև հունիս):

Ստորև ներկայացված 5 շահառուներ, ինչպես նաև շատ այլ շահառուներ, օգտվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N 361-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ ենթակետի դ) պարբերությամբ սահմանված արտոնության պայմանից (5 տարվա արտոնյալ ժամանակահատված), վարկի մայր գումար չեն մարել, և հետևաբար 2024թ. հունվարից մինչև հունիս ժամանակահատվածում եղել է վարկերի մնացորդների նույն չափերը՝

Աղյուսակ 3

Նախարարության (1187–12002) ծախսային միջոցառման հաշվետվության տվյալներ

| Շահառուներ | Վարկի պայմանագր-ային գումար (դրամ) | Վարկի տրամա-դրման ամսաթիվ | Վարկի ավարտի ամսաթիվ | Հաշվետու ամսվա վերջի դրությամբ վարկի մնացորդ (դրամ) | Վարկի տարեկան տոկոսադրույք (%) | Սուբսիդավոր-ման ենթակա տոկոսային կետ (%) |
|---|---|---|---|---|---|---|
| Շահառու 3 «Կ. Ա.» ՍՊԸ | 1,490,000,000. 00 | 8/21/2020 | 8/21/2028 | 1,490,000,000. 00 | 13.15% | 13.15% |
| Շահառու 4 «Ա.» ՍՊԸ | 335,000,000. 00 | 12/30/2020 | 12/20/2028 | 335,000,000. 00 | 13.15% | 13.15% |
| Շահառու 5 «Ի. Ֆ.» ՍՊԸ | 1,240,000,000. 00 | 6/3/2021 | 6/1/2029 | 1,240,000,000. 00 | 13.15% | 13.15% |
| Շահառու 6 «Է. Վ. Ֆ.» ՍՊԸ | 297,000,000. 00 | 10/12/2021 | 10/11/2029 | 297,000,000. 00 | 13.15% | 13.15% |
| Շահառու 7 «Ֆ.» ՍՊԸ | 1,980,000,000. 00 | 12/8/2021 | 12/6/2029 | 1,980,000,000. 00 | 13.15% | 13.15% |

2024թ. հաշվետու՝ հունվարից մարտ և ապրիլից հունիս ընկած ժամանակահատվածում մեր հաշվարկներով տոկոսադրույքների, ինչպես նաև սուբսիդավորման գումարները տարբեր են՝ վարկային մնացորդի նույն գումարների պայմաններում:

Աղյուսակ 4

Նախարարության (1187–12002) ծախսային միջոցառման հաշվետվության տվյալներ

| Շահառուներ | Վարկի մնացորդ (դրամ) | Հունվար | Փետրվար | Մարտ |
|---|---|---|---|---|
| | | Սուբսիդավորման ենթակա տոկոսագումար (դրամ) | Սուբսիդավորման ենթակա տոկոսագումար (դրամ) | Սուբսիդավորման ենթակա տոկոսագումար (դրամ) |
| Շահառու 3 | 1,490,000,000. 00 | 17,714,671. 00 | 15,567,438. 00 | 15,567,438. 00 |
| Շահառու 4 | 335,000,000. 00 | 3,982,829. 00 | 3,500,062. 00 | 3,500,062. 00 |
| Շահառու 5 | 1,240,000,000. 00 | 14,295,671. 00 | 13,402,192. 00 | 12,955,452. 00 |
| Շահառու 6 | 297,000,000. 00 | 3,531,045. 00 | 3,103,040. 00 | 3,103,040. 00 |
| Շահառու 7 | 1,980,000,000. 00 | 23,540,302. 00 | 20,686,932. 00 | 20,686,93. 002 |

Աղյուսակ 5

Նախարարության (1187–12002) ծախսային միջոցառման հաշվետվության տվյալներ

| Ապրիլ | Մայիս | Հունիս | 2024 թվականի 1-ին կիսամյակ |
|---|---|---|---|
| Սուբսիդավորման ենթակա տոկոսագումար (դրամ) | Սուբսիդավորման ենթակա տոկոսագումար (դրամ) | Սուբսիդավորման ենթակա տոկոսագումար (դրամ) | Սուբսիդավորման ենթակա տոկոսագումար  (դրամ) |
| 17,714,672. 00 | 15,030,630. 00 | 16,641,055. 00 | 98,235,904. 00 |
| 3,982,829. 00 | 3,379,370. 00 | 3,741,445. 00 | 22,086,597. 00 |
| 14,295,671. 00. 00 | 12,955,453. 00 | 13,848,932. 00 | 81,753,371. 00 |

| | | | |
|---|---|---|---|
| 3,531,045. 00 | 2,996,038. 00 | 3,317,043. 00 | 19,581,251. 00 |
| 23,540,301. 00 | 19,973,589. 00 | 22,113,616. 00 | 130,541,672. 00 |

***Նախարարության առարկությունները և բացատրությունները.***

*Տոկոսադրույքի հաշվարկն իրականացնում են ֆինանսական կառույցները, վարկի տրամադրման պահից ՄՖԿ-ներն իրականացնում են տոկոսների կուտակում յուրաքանչյուր օր և ամսվա կտրվածքով ամփոփում և ԳՖԿ-ին են ներկայացնում սուբսիդավորման հայտերը՝ նշելով հաշվետու ամսվա ընթացքում սուբսիդավորման ենթակա տոկոսագումարի չափը: Շտեմարանում կամ հաշվետվություններում որևէ բանաձևի միջոցով հնարավոր չէ ներկայացնել տոկոսագումարի հաշվարկը, քանի որ այն կուտակվում է յուրաքանչյուր օր՝ հաշվի առնելով վարկի մնացորդը: Քանի որ վարկային պորտֆելի հաշվառումը ըստ վարկառուների իրականացվում է ՄՖԿ-ների կողմից, ուստի տոկոսադրույքի հաշվարկի իրականացումը կարող է կատարվել միայն ՄՖԿ-ների կողմից: Նույն վարկի գումարի պարագայում սուբսիդավորված գումարների մեծությունը կարող է տարբերվել, հաշվի առնելով այն, թե քանի օր է կուտակվել տոկոս:*

***Հաշվեքննողների մեկնաբանությունը.***

*Նախարարության բացատրությունը առ այն, որ «...շտեմարանում կամ հաշվետվություններում որևէ բանաձևի միջոցով հնարավոր չէ ներկայացնել տոկոսագումարի հաշվարկը» չի բխում Ծրագրի 23 կետի 19-րդ ենթակետով սահմանված «ԳՖԿ-ն հայտը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ֆինանսական կառույցի հետ ճշգրտում է հայտերը, ստուգում է ծրագրի պահանջներին համապատասխանությունը և դրական եզրակացության դեպքում ներկայացնում Նախարարություն» պահանջից:*

*Միաժամանակ, հաշվեքննության արձանագրության մեջ ներկայացված «վարկային մնացորդների նկատմամբ տոկոսագումարների և սուբսիդավորվող գումարների հաշվարկների ճշտության» օրինակներին Նախարարությունը չի անդրադարձել:*

6.3 Հաշվեքննության ընթացքում Նախարարությունից Հաշվեքննիչ պալատի գրավոր հարցմամբ հայցվել է տեղեկատվություն այգիների հիմնման համար տրամադրված վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը դադարեցված շահառուների վերաբերյալ: Վարկի ոչ նպատակային օգտագործման հիմնական դեպքերը վերաբերում են այգեհիմնում չիրականացնելուն: Նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն խախտում կատարած վարկառուներից ինն արդեն սուբսիդավորված՝ ընդհանուր 97,3 մլն. դրամ գումարը փոխանցել են Նախարարությանն, իսկ մյուս չորս վարկառուները ընդհանուր 29,2 մլն. դրամ գումարը դեռևս չեն փոխանցել Նախարարությանը: Հարկ է նշել, որ Ծրագրի 1-ի 23-րդ կետի 23-րդ ենթակետի համաձայն «սուբսիդավորման գումարը ենթակա է վերադարձման՝ 3 ամսվա ընթացքում (սուբսիդավորված գումարի

վերադարձն իրականացնում է ֆինանսական կառույցը)»: Պալատին տեղեկատվություն չի ներկայացվել վարկային պայմանագրի կամ սուբսիդավորման դադարեցման ամսաթվի վերաբերյալ: Միաժամանակ անհրաժեշտ է ապահովել սուբսիդավորված գումարի վերադարձը սահմանված ժամկետում:

***<u>Նախարարության առարկությունները և բացատրությունները</u>.***

*«2024թ. ինն ամսվա դրությամբ բոլոր ոչ նպատակային դեպքերում սուբսիդավորված գումարները հետ են վերադարձվել:»*

***<u>Հաշվեքննողների մեկնաբանությունը</u>.***

*Ընդունվել է ի գիտություն:*

6.4 Նախարարության կողմից ներկայացված շտեմարանում «Ս...» ՍՊԸ շահառուի դիմաց նշվել է 200 հեկտար, սեղանի խաղող, կեռաս, սալոր, ծիրան խաղողի այգի, դեղձի այգի, պայմանագրի գումարը՝ 7,454.20 հազ. դրամ: Նշված շահառուի կողմից հիմնված այգին ներկայացված է ընդհանուր մակերեսով, առանց առանձնացնելու տարբեր տեսակի տնկանյութերով (ինտենսիվ /հնդավոր, կորիզավոր, և չոր մերձարևադարձային/ ինտենսիվ /ընկուզավոր/, խաղող և հատապտղային) հիմնված այգիների մակերեսները: Ծրագիր 1-ով սահմանված կարգով նշված տարբեր տեսակի տնկանյութերով հիմնված այգիների համար պահանջվում են տարբեր հաշվարկներ, ուստի հնարավոր չի պարզել պայմանագրի գումարի հաշվարկ-հիմնավորումը:

***<u>Նախարարության առարկությունները և բացատրությունները</u>.***

*2024թ. 9 ամսվա հաշվետվության մեջ այլ նշումներ սյան մեջ ներառվել են լրացուցիչ տվյալներ, որտեղից արդեն պարզ է դառնում, թե յուրաքանչյուր պտղատեսակի համար քանի հա այգեհիմնում է իրականացվել:*

***<u>Հաշվեքննողների մեկնաբանությունը</u>.***

*Ընդունվել է ի գիտություն:*

6.5 «Ա. ...» ՓԲԸ շահառուի դիմաց նշվել է 20 հեկտար կեռաս, պայմանագրի գումարը նշվել է 840,000.0 հազ. դրամ: Ըստ Ծրագրի 1-ի 16-րդ կետով նշված պտղատեսակի համար 1 հա այգեհիմնման գնահատված ընդհանուր ծախսերի առավելագույն սահմանաչափը առանց կարկտապաշտպան ցանցի սահմանվել է 30.3 մլն. դրամ: Ուստի 20 հեկտար մակերեսով այգու պայմանագրի առավելագույն գումարը կկազմի 20 X 30.3 = 606.0 մլն. դրամ: Ըստ մոնիթորինգի 21.06.2024թ. արձանագրությունով նշված է, որ տվյալ այգին առանց կարկտապաշտպան ցանցի է:

***<u>Նախարարության առարկությունները և բացատրությունները</u>.***

*«Ա....» ՓԲԸ շահառուի կողմից այգեհիմնումն իրականացվել է կարկտապաշտպան համակարգի տեղադրումով, 1 հա սահմանաչափը համաձայն*

*փվյալ պահին գործող իրավակարգավորման կազմել է 40,2 մլն ՀՀ դրամ, թույլատրելի շեղումը 10%, համապատասխանում է ծրագրի պահանջներին:*

***<u>Հաշվեքննողների մեկնաբանությունը</u>.***

*Համաձայն Նախարարության 21.06.2024թ. մոնիթորինգի արձանագրության՝ «փվյալ այգին առանց կարկտապաշտպան ցանցի է»:*

6.6 Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի «Հանրային իշխանության մարմինների (բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների) և պետական ոչ առևտրային կազմակերպությունների պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկող ավտոմեքենաների հատկացման ու շահագործման, պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը, առանձին մարմիններին հատկացվող ծառայողական և սպասարկող ավտոմեքենաների սահմանաքանակները, ավտոմեքենաների վառելիքի, յուղերի ու քսուքների ծախսի, ավտոդողերի վազքի, կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների նորմաները, պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկելու նպատակով ձեռք բերվող ավտոմեքենաների առանձին չափորոշիչները հաստատելու մասին» N 1666-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում 4) հաստատվել է պետական կառավարման համակարգի մարմինների, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի, մարզպետների աշխատակազմերի և համակարգը սպասարկող այլ կազմակերպությունների պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկող ավտոմեքենաների հատկացման, շահագործման և տրանսպորտային ծախսերի փոխհատուցման ու առանձին մարմիններին հատկացվող ծառայողական և սպասարկող ավտոմեքենաների սահմանաքանակների սահմանման կարգը:

Որոշում 4-ով հաստատվել են նաև Հայաստանի Հանրապետության հանրային իշխանության մարմինների պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկելու նպատակով ձեռք բերվող ավտոմեքենաների վառելիքի, յուղերի ու քսուքների ծախսի, ավտոդողերի վազքի, կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների, ինչպես նաև ավտոմեքենաների առանձին չափորոշիչները:

Որոշում 4-ի 9-րդ կետով հանձնարարվել է պետական մարմինների ղեկավարներին՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) եռամսյա ժամկետում իրենց ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային և առևտրային կազմակերպություններում վերջիններիս սեփականությունը հանդիսացող առկա տրանսպորտային միջոցների սահմանաքանակը, ինչպես նաև իրենց միջոցների հաշվին ձեռք բերվող

տրանսպորտային միջոցների գնման գործընթացը համապատասխանեցնել սույն որոշմամբ հաստատված կարգի դրույթներին.

2) չորսամսյա ժամկետում Պետական գույքի կառավարման կոմիտե ներկայացնել տեղեկատվություն սույն որոշման կատարման ընթացքի մասին, ինչպես նաև իրականացնել ավտոմեքենաների հասանելի սահմանաչափը գերազանցող տրանսպորտային միջոցների հանձնումը Պետական գույքի կառավարման կոմիտեին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2024 թվականի հունիսի 30-ի դրությամբ Նախարարությունը չի ապահովել տրանսպորտային միջոցների շահագործման ծախսերի հաշվարկի անցումն Որոշում 4-ի սահմանված չափորոշիչներին:

***<u>Նախարարության առարկությունները և բացատրությունները</u>***.

*«Որոշում 4-ով սահմանվել է տրանսպորտային միջոցների շահագործման ծախսերի հաշվարկի նոր չափորոշիչներ: Քանի որ բաց է թողնվել Որոշմամբ նախատեսված առանձին մարմիններին հատկացվող ծառայողական և սպասարկող ավտոմեքենաների սահմանաքանակների հաստատման համար սահմանված ժամկետները և հայտի ներկայացման կարգը, ուստի հաշվարկի անցումը վերոհիշյալ չափորոշիչներին ապահովելու նպատակով նախարարության կողմից շրջանառվել է առանձին մարմիններին հատկացվող ծառայողական և սպասարկող ավտոմեքենաների սահմանաքանակների հաստատման վերաբերյալ կառավարության որոշման նախագիծ, որի վերաբերյալ շահագրգիռ մարմինների կողմից ստացվել են կարծիքներ: Վերոհիշյալ կարծիքները ամփոփելուց հետո նախագիծը կներկայացվի կառավարությանը հաստատման, այնուհետև կնախաձեռնվի տրանսպորտային միջոցների շահագործման ծախսերի հաշվարկի անցումը սահմանված չափորոշիչներին:»*

***<u>Հաշվեքննողների մեկնաբանությունը</u>***

*Ընդունվել է ի գիտություն:*

# 7. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Նախարարության 2023թ. պետական բյուջեի տարեկան հաշվեքննության ընթացիկ եզրակացությամբ արձանագրվել են 10 անհամապատասխանություններ, 1 խեղաթյուրում, 2 այլ փաստեր և ներկայացվել՝ 4 առաջարկություններ: Ընթացիկ եզրակացությամբ ներկայացված 4 առաջարկություններից հաշվեքննության օբյեկտը 3-ն ընդունել է, իսկ մեկն ընդունել է մասամբ: Ընդունված առաջարկությունների գծով համապատասխան աշխատանքները կատարման ընթացքում են: Արձանագրված 10 անհամապատասխանությունները հաշվեքննության օբյեկտն ընդունել է, 9-ի մասով աշխատանքները կատարման ընթացքում են, 1-ի մասով՝ կատարված: Այլ փաստերից 1-ը հաշվեքննության օբյեկտն ընդունել է, աշխատանքները կատարման ընթացքում են: Արձանագրված 1 այլ փաստը հաշվեքննության օբյեկտը չի ընդունել, որի կապակցությամբ Հաշվեքննիչ պալատը պնդել է իր դիրքորոշումը:

Նախարարության 2024թ. պետական բյուջեի երեք ամիսների հաշվեքննության ընթացիկ եզրակացությամբ արձանագրվել են 5 անհամապատասխանություններ, 3 այլ փաստեր և ներկայացվել՝ 4 առաջարկություններ: Ընթացիկ եզրակացությամբ ներկայացված 4 առաջարկությունները հաշվեքննության օբյեկտն ընդունել է, համապատասխան աշխատանքները կատարման ընթացքում են: Արձանագրված 5 անհամապատասխանությունները հաշվեքննության օբյեկտն ընդունել է, 4-ի մասով աշխատանքները կատարման ընթացքում են, 1-ի մասով՝ կատարված: Արձանագրված 3 այլ փաստերը հաշվեքննության օբյեկտը ընդունել է, աշխատանքները կատարման ընթացքում են, մեկ այլ փաստի գծով՝ կատարված:

Նախարարության 2023 թվականի պետական բյուջեի տարեկան և 2024թ. պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննություններով արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների, ընթացիկ եզրակացությանը վերաբերվող այլ գրավոր տեղեկատվության և առաջարկությունների իրականացման հետհսկողական գործընթացների *(տրված առաջարկությունների հիման վրա դեռևս չվերացված անհամապատախանությունների և չկարգավորված այլ հարաբերությունների մասով)* վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հավելվածում:

# 8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը՝

8.1 Ելնելով ընթացիկ հաշվեքննության արդյունքներից առաջարկվում է միջոցներ ձեռնարկել.

8.1.1 Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով սահմանված.

- տրամադրված լիզինգների ըստ ամիսների՝ մայր գումարի հավասարաչափ մարման եղանակի պայմանի ապահովման և վերահաշվարկների իրականացման,
- վարկերի և լիզինգների առավելագույն ժամկետների և տարեկան փաստացի սուբսիդավորվող տոկոսադրույքների պահպանման
- սուբսիդավորման ենթակա տոկոսագումարների հաշվարկների ճշտության գնահատման նպատակով հսկողական մեխանիզմներ ներդնելու ուղղությամբ:

8.1.2 Նախարարության տրանսպորտային միջոցների շահագործման ծախսերի հաշվարկները Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված չափորոշիչներով իրականացնելու ուղղությամբ:

8.2 Նախորդ՝ 2023 թվականի պետական բյուջեի տարեկան, 2024 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննություններով արձանագրված խնդիրների լուծված չլինելու հանգամանքը՝ հաշվեքննություններով ներկայացված առաջարկությունների իրագործման, անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման նպատակով հետամուտ լինել Նախարարության կողմից ներկայացված միջոցառումների ծրագրերի սահմանված ժամկետներում իրականացմանը:

«Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջի համապատասխան՝ մեկամսյա ժամկետում մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանում(ներ)ն ու կատարման ժամանակացույցը և Հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման վերաբերյալ:

**Եղիշե Սողոմոնյան**
**Հաշվեքննիչ պալատի անդամ**
«31» Հոկտեմբեր, 2024 թվական
*ՀՀ հաշվեքննիչ պալատ,*
*Մ.Բաղրամյան 19, Երևան*
*Հայաստանի Հանրապետություն*

# 9. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հավելված 1

| ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2023 **ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ** ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ** ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | | |
|---|---|---|---|---|
| Թիվ | **Առաջարկություններ** | **Հաշվեքննության օբյեկտի արձագանքը** | **Հաշվեքննողների մեկնաբանությունը** | **Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները** |
| 1.1 | Ձեռնարկել միջոցներ Նախարարության կողմից կնքվող պայմանագրերի կառավարման ընթացակարգեր ներդնելու ուղղությամբ, որոնցում կհստակեցվեն գործընթացում ներգրավված պատասխանատուների գործառույթները և պարտականությունները՝ հնարավորություն ընձեռելով նաև կանխարգելել պետական բյուջեով չնախատեսված պարտավորությունների ստանձնումը:<br><br>(30 ապրիլի 2024թ.) | **Ընդունված չէ:**<br>«Միջոցառումների շրջանակներում վարկերը տրամադրվում են մասնակից ֆինանսական կառույցների կողմից, որոնք էլ հետագայում ներկայացնում են համապատասխան սուբսիդավորման հայտեր և առկա չէ որևէ սահմանաչափ թե ինչքան վարկ կարող է տրամադրվել, ուստի հնարավոր չէ կանխատեսել, թե ինչ ծավալի վարկեր կարող են տրամադրվել հաշվետու ժամանակահատվածի ընթացքում և դրանով պայմանավորված չստանձնել պետական բյուջեով չնախատեսված ավել պարտավորություններ: Խնդրի կարգավորման նպատակով ԳՖԿ-ի և ՄՖԿ-ների միջև կնքված պայմանագրերում լրացվել է նոր դրույթը՝ ըստ որի տվյալ միջոցառման գծով սուբսիդավորման գումարների բացակայության դեպքում գումարները կվճարվեն դրանց առկայության դեպքում՝ փոփոխված ժամկետներով: Նշված խնդիրը քննարկվել է ՄՖԿ-ների հետ, որոնք տեղեկացրել են, որ իրատեսական չէ և իրենց կողմից չի կարող պլանավորվել թե տարեկան կտրվածքով ինչ ծավալի վարկեր կտրամադրվեն, ինչը հնարավորություն չի տալիս կանխատեսել սպասվող պարտավորությունների չափը:» | **Ընթացքում է:**<br>Արձանագրված անհամապատասխանությունը վերաբերվում է ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի թիվ 706-Ն որոշման 28-րդ և 36-րդ կետերով սահմանված պետական բյուջեով նախատեսված չափերից ավելի պարտավորություններ ստանձնելուն: Արձագանքում մատնանշված պայմանագրի ավելացված դրույթը սահմանափակում է վճարման պարտավորության ստանձնումը տվյալ ժամանակահատվածում: Ինչ վերաբերվում է տարեկան կտրվածքով նշված խնդրի՝ պլանների ճշգրտմամբ բացակայությանը, ապա հարկ է նշել, որ հիշատակված անհամապատասխանությունն արձանագրվել է 2023թ. տարեկան պլանի ճշգրտումից հետո: Հաշվեքննողները հարկ են համարում նշել, որ համաձայն ֆինանսական կառավարման տարրերի՝ բյուջետային ծրագրերի պատասխանատուները պարտավոր են հետևել օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների ստանձմանը, դրանց գծով կանխատեսումների կարողության պահանջին համապատասխան: ՄՖԿ-երի հետ կնքված պայմանագրերում նախատեսված չէ դրույթ, համաձայն որի վերջիններիս կողմից նախապես գործող կանոններով առաջարկվող ծրագրերը Նախարարության կողմից ենթակա են պարտադիր քննարկման և ընդունման: Հաշվեքննողները հարկ են համարում նշել, որ Նախարարության կողմից պետական բյուջեով չնախատեսված պարտավորությունների ստանձնման գործառույթները կանոնակարգելիս՝ կառավարման և հսկողական ընթացակարգեր ներդնելու գործում անհրաժեշտ է տարբերակել նախորդ տարիներին կնքված պայմանագրերով ստանձնված և տվյալ ժամանակահատվածներում կնքվող պայմանագրերով ստանձվող պարտավորությունները: Խնդրին անդրադարձ կկատարվի Նախարարության 2024թ. պետական բյուջեի կատարման հաշվեքննությունների ընթացքում: | **Ընդունվել է ի գիտություն** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1.2 | Ձեռնարկել միջոցներ «ՀՀ-ում աշնանացան ցորենի արտադրության խթանման նպատակով փոխհատուցման տրամադրում» միջոցառման շրջանակում ներքին հսկողության մեխանիզմների ներդրման ուղղությամբ։<br><br>(30 ապրիլի 2024թ.) | **Ընդունված է։**<br>«Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման նպատակով փոխհատուցման տրամադրում» ծրագիրը ավարտված է և ներկայումս ուսումնասիրվում են հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ համայնքապետարանների կողմից տրված պարզաբանումները, իսկ նման ծրագիր իրականացնելու պարագայում հսկողական մեխանիզմների ներդրման վերաբերյալ առարկություններ չկա և ընդունվում է ի գիտություն։<br>**Կատարող՝** Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման վարչություն։<br>**Ժամկետ՝** Գործընթացի աշխատատար լինելու հանգամանքով պայմանավորված անհրաժեշտ են լինելու լրացուցիչ ժամկետներ ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված անհամապատասխանությունները համայնքապետարանների կողմից տրված պարզաբանումների հետ համադրելու և ամփոփելու համար։ Միաժամանակ անհրաժեշտ է լինելու լրացուցիչ համատեղ ուսումնասիրություն և ցանկերի վերջնական հստակեցում։» | **Ընթացքում է։** | **Ծրագրին ավարտված է և չի գործում, սակայն նմանատիպ ծրագիր իրականացնելու պարագայում հաշվի կառնվի առաջարկությունը և կկիրառվեն վերահսկման մեխանիզմների ներդրման հնարավոր տարբերակները։** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1.3 | Ձեռնարկել միջոցներ ապահովելու հաշվապահական հաշվառման նոր համակարգին ամբողջական անցումը:<br><br>(30 ապրիլի 2024թ.) | **Ընդունված է:**<br>«Հաշվապահական հաշվառման նոր համակարգի ամբողջական ներդրումը կապված է գույքագրման և վերագնահատման գործընթացի հետ, որն նախատեսվում է իրականացնել 2024 թվականի ընթացքում:<br>**Կատարող՝** Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչություն, Գործերի կառավարման վարչություն:<br>**Ժամկետ՝** 2024 թվականի ընթացքում:» | **Ընթացքում է:** | **Ներկայումս գույքագրման աշխատանքների իրականացման ընթացքում ի հայտ են եկել խոչընդոտներ՝ մասնավորապես, նախարարության վարչական Ա և Բ մասնաշենքերում ընթացող շին․ վերանորոգման աշխատանքները, ենթակա կազմակերպությունների լուծարումները և այլն: Վորոհիշյալով պայմանավորված գույքագրման աշխատանքները կավարտվեն մինչև 2025թ. ապրիլ ամիսը:** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1.4 | «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջի համապատասխան՝ մեկամսյա ժամկետում մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանում(ներ)ն ու կատարման ժամանակացույցը և Հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերվող այլ գրավոր տեղեկատվություն:<br><br>(30 ապրիլի 2024թ.) | **Ընդունված է:**<br>«Էկոնոմիկայի նախարարին ուղղված 2024 թվականի մայիսի 20-ի N ՀՊԵ/01/354-2024 գրությամբ Հաշվեքննիչ պալատի նախագահը ներկայացրել է Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի ապրիլի 30-ի N 59-Ա որոշմամբ հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը, որում արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների առաջացման պատճառների/հանգամանքների և դրանք վերացնելու և/կամ հետագայում բացառելու ուղղությամբ կատարվող աշխատանքները ներկայումս ընթացքի մեջ են և դրանց կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը Վարչապետի աշխատակազմ և Հաշվեքննիչ պալատ կներկայացվեն լրացուցիչ:» | **Ընթացքում է:** | **Կատարման ընթացքում է:** |

Հավելված 2

| ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ **ՏԱՐԵԿԱՆ** **ԿԱՏԱՐՄԱՆ** ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ **ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ** ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | | |
|---|---|---|---|---|
| Թիվ | **ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **Հաշվեքննության օբյեկտի արձագանքը** | **Հաշվեքննողների մեկնաբանությունը** | **Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները** |
| 2.1 | Առկա են անհամապատասխանություններ ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 28-ի «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը հաստատելու մասին» № 201-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում 1) հավելվածի 36-րդ կետի հետ: 36-րդ կետի համաձայն ներկայացված ամփոփ հաշվետվության «Փաստացի սուբսիդավորված գումար (աճողական)» սյան ցուցանիշներում չեն արտացոլվել 2023 թվականին վերահաշվարկի արդյունքում ՖԿ-ների կողմից հետ վերադարձված գումարները: Որոշում 1-ի հավելվածի 36-րդ կետի համաձայն՝ «ԳՖԿ-ն յուրաքանչյուր ամիսը մեկ՝ ամսվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում ամփոփ հաշվետվություն է ներկայացնում ՀՀ ֆինանսների նախարարություն, Նախարարություն, ՀՀ կենտրոնական բանկ և ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ համաձայն №2 ձևի: ԳՖԿ-ի կողմից կազմված և ներկայացված 2023թ. դեկտեմբեր ամսվա հաշվետվության «Փաստացի սուբսիդավորված գումար (աճողական)» սյան ցուցանիշները չեն նվազեցվել 2023 թվականին վերահաշվարկի արդյունքում թվով 5 ՖԿ-ների կողմից վերադարձված 78,870.76 հազ. դրամ գումարի չափով (ՖԿ-ների ցանկը տրամադրվել է Նախարարությունը): | **Ընդունված է:**<br>«Նշված գումարների վերադարձները բանկերի կողմից իրականացվել են համաձայն Ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության կողմից կազմված ստուգման ակտի, Քննչական կոմիտեի գրության և ԳՖԿ-ի կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքների հիման վրա: Բանկերը ԳՖԿ ներկայացվող հաշվետվության մեջ դեռևս չեն նվազեցրել «Փաստացի սուբսիդավորված գումար (աճողական)» սյունը, քանի որ միջոցները վերադարձվել են բանկերի կողմից, որոնք դեռևս չեն վերականգնվել համապատասխան շահառուների կողմից, ուստի «Փաստացի սուբսիդավորված գումար (աճողական)» սյունը շահառուների մասով մնացել է անփոփոխ:» ԳՖԿ-ի կողմից ներկայացված ամփոփ հաշվետվության «Փաստացի սուբսիդավորված գումար (աճողական)» սյան ցուցանիշները ԳՖԿ-ի կողմից լրացվում են հիմք ընդունելով ՄՖԿ-ներից ստացված տվյալները: ՄՖԿ-ները հայտնում են, որ նշված գումարների վերադարձները իրականացվել են իրենց կողմից՝ համաձայն տարբեր մարմինների ստուգումների արդյունքների, որոնք դեռևս չեն վերականգնվել համապատասխան շահառուների կողմից, հետևաբար «Փաստացի սուբսիդավորված գումար (աճողական)» սյունը շահառուների մասով մնացել է անփոփոխ և կփոփոխվեն այն դեպքում, երբ ՄՖԿ-ները շահառուներից կվերականգնեն վերադարձված գումարները:» | **Ընթացքում է:** | **Ընդունվել է ի գիտություն** |
| 2.2 | 2.2.1 Առկա է անհամապատասխանություն Որոշում 2-ի հավելվածի 4-րդ կետի հետ: Որոշում 2-ի հավելվածի 4-րդ կետի համաձայն՝ *«Ծրագրի շահառու կարող է հանդիսանալ մինչև 100 հա մակերեսով* | **Ընդունված է:**<br>«ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան | **Ընթացքում է:** | **Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | *(բացառությամբ տնամերձ հողատարածքների) ցորենի ցանքատարածություններ մշակող տնտեսավարողը…:»* Բնակավայրային (տնամերձ) հողատարածքներում 2023թ. երրորդ եռամսյակում 47 տնտեսավարողներին փոխհատուցվել է 1,965.71 հազ. դրամ (ցանկը տրամադրվել է Նախարարությանը): Նույնաբովանդակ անհամապատասխանություն արձանագրվել էր 2023թ. վեց ամիսների հաշվեքննությամբ՝ 51 տնտեսավարողներին փոխհատուցվել էր 1,431.08 հազ. դրամ: 2023թ. ինն ամիսներին Որոշում 2-ով շահառուների համար նախատեսված պայմաններին չհամապատասխանող՝ տնամերձ հողատարածքներ մշակող ընդհանուր 98 տնտեսավարողներին փոխհատուցվել է 3,396.79 հազ. դրամ:<br>2.2.2 Առկա են անհամապատասխանություններ Որոշում 2-ի հավելվածի 12-րդ և 21-րդ, ինչպես նաև Նախարարության և համայնքների միջև կնքված «Պետական աջակցության գումարի տրամադրման վերաբերյալ» պայմանագրերի 2.2 կետերի դրույթների հետ: Որոշում 2-ի հավելվածի 12-րդ կետի համաձայն՝ *«Շահառուները ոչ ուշ, քան մինչև 2023 թվականի ապրիլի 1-ը փոխհատուցում ստանալու նպատակով դիմում են համայնքի կամ բնակավայրի վարչական ղեկավարին՝ դիմումում նշելով ցորենի փաստացի առկա ցանքատարածության տեղը, մակերեսը և …»:* 21-րդ կետի համաձայն՝ *«Նախարարությունը մինչև 2023 թվականի օգոստոսի 1-ն ուսումնասիրում է համայնքների կողմից ծրագրի 19-րդ կետով ներկայացված փաստաթղթերը, և անճշտությունների առկայության դեպքում համայնքներին առաջարկվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում կատարել համապատասխան ճշգրտումներ ու տեղեկատվություն ներկայացնել նախարարություն: Ճշգրտումից հետո շահառուներին չփոխանցված գումարները 1-ամսյա ժամկետում ենթակա են վերադարձման պետական բյուջե:»:* 2023թ. երրորդ եռամսյակում Նախարարության կողմից տրամադրված թվով 390 շահառուների ցանքատարածությունների մակերեսները 505,70 հա-ով գերազանցել են ՀՀ անշարժ գույքի միասնական շտեմարանում (այսուհետ՝ Շտեմարան) իրավունքի պետական գրանցում ստացած նույն ցանքատարածությունների փաստացի մակերեսներին, որոնց համար նշված շահառուներին ավելի վճարված փոխհատուցման գումարը կազմել է 39,881.66 հազ. դրամ (ցանկը տրամադրվել է Նախարարությանը): Նույնաբովանդակ անհամապատասխանություն արձանագրվել էր 2023թ. վեց ամիսների հաշվեքննությամբ՝ 135 տնտեսավարողներին ցանքատարածությունների մակերեսների 150,8 հա-ով գերազանցմամբ փոխհատուցվել էր 13,123.16 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում Նախարարության կողմից տրամադրված շահառուների ցանքատարածությունների մակերեսները 656,50 հա-ով գերազանցել են Շտեմարանում իրավունքի պետական գրանցում ստացած նույն ցանքատարածությունների փաստացի մակերեսները, ինչը նշանակում է, որ Որոշում 2-ով շահառուների համար նախատեսված պայմաններին չհամապատասխանող 525 տնտեսավարողներին ավելի վճարված փոխհատուցման ընդհանուր գումարը 2023թ. ինն ամիսներին կազմել է ընդամենը 53,004.72 հազ. դրամ: | ստորաբաժանումը ՀՀ համայնքների կողմից 6 ամիսների վերաբերյալ ներկայացված պարզաբանումներն աշխատանքային էլեկտրոնային փոստով ներկայացրել է ՀՀ հաշվեքննիչ պալատին, իսկ 9 ամիսների անհամապատասխա-նություններն ամփոփվում են, որոնք ևս կներկայացվեն ՀՀ հաշվեքննիչ պալատին: Ընդհանուր 6 և 9 ամիսների վերաբերյալ պետք է իրականացվի ամփոփիչ ուսումնասիրություն համայնքների կողմից ներկայացված պար-զաբանումներն ամփոփելու նպատակով: «Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման նպատակով փոխհատուցման տրամադրում» ծրագիրը ավարտված է և ներկայումս ուսումնասիրվում են հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ համայնքապետարանների կողմից տրված պարզաբանումները, իսկ նման ծրագիր իրականացնելու պարագայում հսկողական մեխանիզմների ներդրման վերաբերյալ առարկություններ չկա և ընդունվում է ի գիտություն: Հայտնում ենք, որ դեռևս համայնքապետարանների կողմից ներկայացված պարզաբանումների ուսումնասիրությունները ընթացքի մեջ են և շուտով կավարտվեն, իսկ Հաշվեքննիչ պալատի կողմից տնամերձ հողամասերում կատարված ցանքերի վերաբերյալ ներկայացված անհամապատասխանությունների ցանկերում առկա են շահառուներ, որոնց մասով համայնքապետարանների կողմից ներկայացված պարզաբանումներից ակնհայտ է, որ կադաստրի շտեմարանում առկա տեղեկատվությունը որոշ դեպքերում չի համապատասխանում անշարժ գույքերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներում լրացված տեղեկատվության հետ, ուստի այդ հանգամանքով պայմանավորված անհրաժեշտություն կառաջանա լրացուցիչ ուսումնասիրություն իրականացնելու և համապատասխանող շահառուների ներկայացված ցանկերից հանելու նպատակով:» | | **անհամապատասխանությունների վերաբերյալ համայնքապետարանների կողմից 9 ամիսների վերաբերյալ ներկայացված պարզաբանումների ամփոփումը դեռևս չի ավարտվել, քանի որ աշխատանքը ծավալուն է և յուրաքանչյուր շահառուի մասով կատարվում է ուսումնասիրություն և ամփոփում, միաժամանակ համապատասխան ստորաբաժանումը ծանրաբեռնված է ընթացիկ մյուս աշխատանքներով, ուստի լրացուցիչ ժամկետների անհրաժեշտություն է առաջանում, և ստորաբաժանումը փորձում է հնարավորինս սեղմ ժամկետներում ամփոված նյութերը փոխանցել ՀՀ հաշվեքննիչ պալատին:** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2.3 | Առկա են անհամապատասխանություններ 2023 թվականի հունվարի 17-ին Նախարարության և «Գյուղատնտեսական ծառայություններ կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ) միջև կնքված դրամաշնորհի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր 2) 2.3.4, 2.4.1 և 2.4.7 ենթակետերով սահմանված պահանջների միջև մասնավորապես համաձայն՝<br>• Պայմանագիր 2-ի 2.3.4 ենթակետի՝ «Պետական մարմինը պարտավոր է իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են»:<br>• Պայմանագիր 2-ի 2.4.1 ենթակետի՝ «Կազմակերպությունը պարտավոր է իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ ՀՀ հաշվապահական հաշվառման № 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում»:<br>• Պայմանագիր 2-ի 2.4.7 ենթակետի՝ «Կազմակերպությունը պարտավոր է ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան»: | **Ընդունված է:**<br>«1116-11001 միջոցառման շրջանակներում 2023 թվականի հունվարի 17-ին կնքված դրամաշնորհի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր 3) 2.4.1 ենթակետի պարտադիր պահանջների վերաբերյալ հայտնում եմ, որ «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) չի կարող առաջնորդվել ՀՀ հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտներով, քանի որ, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հուլիսի 23-ի թիվ 463-Ն հրամանի, Կազմակերպության հաշվապահական հաշվառումն իրականացվում է հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգով: Պայմանագրի 2.4.7 ենթակետի կատարման վերաբերյալ՝ Կազմակերպության կարիքների համար թղթային եղանակով գնանշման հարցման ընթացակարգով անասնաբուժական ծառայությունների ձեռք բերման համար երկու անգամ՝ 2021 թվականի նոյեմբերի 2-ին և 18-ին, հայտարարություն է տրվել www.gnumner.am գնումների պաշտոնական կայքում, սակայն երկու դեպքում էլ գնման ընթացակարգին ոչ մի հայտ չի ներկայացվել և այն հայտարարվել է չկայացած: Այդ իսկ պատճառով Կազմակերպությունը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ գլխի 777-րդ հոդվածի դրույթներով, համաձայն որոնց ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով կատարողը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով մատուցել ծառայություններ, իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ծառայությունների մատուցման համար կնքվում է գրավոր պայմանագիր, ինչպես նաև հիմք ընդունելով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ գլխում նշված դրույթները կիրառվում են նաև անասնաբուժական և խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրերի նկատմամբ 2023 թվականին «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրով նախատեսված գյուղատնտեսական կենդանիների կարանտինային, խիստ վտանգավոր, վարակիչ հիվանդությունների նկատմամբ անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների իրականացման նպատակով, համայնքները սպասարկող անասնաբույժների հետ կնքվել են ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր:» | **Ընթացքում է:** | **Ընդունվել է ի գիտություն** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2.4 | Նախարարությունը չի իրականացրել Պայմանագիր 2-ի վերը հիշատակված 2.3.4 ենթակետով իրեն վերապահված պարտավորությունները, որոնց հետևանքով առաջացել են հետևյալ անհամապատասխանությունները, մասնավորապես.<br>Պայմանագիր 2-ի 2.4.1 ենթակետում ամրագրված պարտավորությունը չի կարող վերաբերվել ՊՈԱԿ-ին, քանի որ վերջինս հաշվապահական հաշվառումը պարտավոր է վարել «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներին համապատասխան:<br>Համաձայն «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի.<br>2-րդ հոդվածի 1-ին մասի՝ օրենքը տարածվում է ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների, ներառյալ՝ նրանց ստեղծած հիմնարկների վրա:<br>3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը ներառում են՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտը (ՀՀՀՀՍ): ՊՈԱԿ-ը անասնաբույժերի հետ կնքել է «Անասնաբուժական ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացվող ծառայությունների վճարովի մատուցման» պայմանագրեր՝ առանց Պայմանագիր 2-ի 2.4.7 ենթակետով նախատեսված «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կանոնակարգերի պահպանման: | **Ընդունված է:**<br><br>Նախարարությունը կձեռնարկի միջոցներ անհամապատասխանությունները շտկելու ուղղությամբ:<br>Պլանավորվում է 2024թ.-ի 4-րդ եռամսյակում կատարել Պայմանագրի մեջ փոփոխություն:<br>**Կատարող՝** Սննդամթերքի անվտանգության վարչություն:<br>**Ժամկետ՝** 2024թ.-ի 4-րդ եռամսյակ: | **Ընթացքում է:** | **Ընդունվել է ի գիտություն** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2.5 | Առկա է անհամապատասխանություն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների հետ: «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ներքին աուդիտն իրականացնում են կազմակերպության կառուցվածքում գործող ներքին աուդիտի ստորաբաժանման կամ հրավիրված՝ սույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկված անձինք: Եթե աուդիտն իրականացնում են հրավիրված անձինք, ապա վերջիններս են ապահովում սույն օրենքով աուդիտի ստորաբաժանման, ներառյալ՝ ստորաբաժանման ղեկավարի համար սահմանված իրավունքների և պարտականությունների կատարումը»: | **Ընդունված է:**<br><br>«2022-2023 թթ. հաշվետու տարիների համար «ներքին աուդիտի» արտապատվիրակման «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջի հայտարարվել է երկրորդ մրցույթը, որը նույնպես չի կայացել մասնակիցների կողմից հայտ չներկայացնելու հիմքով, այդ իսկ պատճառով 2022 թվականի հաշվետու ժամանակաշրջանի ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը լիազոր մարմնին չի ներկայացվել: Աշխատանքներն ընթացքի մեջ է:» | **Ընթացքում է:** | **Ընդունվել է ի գիտություն** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2.6 | Առկա են անհամապատասխանություններ ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի «ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման անցկացման կարգը և ժամկետները սահմանելու մասին» № 2-Ն հրամանի (այսուհետ՝ Հրաման 1) 5-րդ կետի և 6-րդ կետի 1-ին ենթակետի հետ: Հրամանի 5-րդ կետի համաձայն՝ կազմակերպության ակտիվներն ու պարտավորությունները ենթակա են պարտադիր գույքագրման տարեկան ֆինանսական հաշվետվություններ կազմելուց առաջ՝ հոկտեմբերի 1-ից ոչ շուտ: Հրաման 1-ի 6-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հիմնական միջոցները ենթակա են պարտադիր գուքագրման առնվազն երեք տարին մեկ անգամ, բացառությամբ համակարգչային տեխնիկայի, գրասենյակային կահույքի և հեռախոսների (համակարգչային տեխնիկան, գրասենյակային կահույքը և հեռախոսները ենթակա են պարտադիր գույքագրման յուրաքանչյուր տարի): Պալատի 2024 թվականի մարտի 19-ի № ՀՊԵ/01/179-2024 գրությամբ հայցվել են Նախարարությունում անցկացված վերջին գույքագրման ցուցակները, որոնք չեն տրամադրվել: Ցուցակների չտրամադրման վերաբերյալ բանավոր հարցմանը տրվել է պարզաբանում, ըստ որի 2023 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվություններ կազմելուց առաջ պարտադիր գույքագրում չի կատարվել, Նախարարությունում գույքային ցուցակներ առկա չեն: | **Ընդունված է:**<br><br>«Դիտողություններ չկան:» | **Ընթացքում է:** | **Ընդունվել է ի գիտություն** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2.7 | Առկա են անհամապատասխանություններ ՀՀ կառավարության 17.03.2016թ. «Հանրային հատվածի կազմակերպությունների հիմնական միջոցների գույքագրման և վերագնահատման մասին» № 264-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում 4) 1-ին կետի 2-րդ ենթակետի, ՀՀ ֆինանսների նախարարի 11.092014թ. «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի ներդրման գործողությունների պլանը հաստատելու մասին» № 607-Ա հրամանի (այսուհետ՝ Հրաման 2) 3.3.1 կետի և ՀՀ ֆինանսների նախարարի 24.10. 2014թ. «ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտը հաստատելու մասին» № 725-Ն հրամանի հավելվածի (այսուհետ՝ Ստանդարտ) 11.29 և 11.30 կետերի հետ: Որոշում 4-ի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ կազմակերպությունները պարտավոր են հիմնական միջոցների գույքագրումը և վերագնահատումն ավարտել մինչև հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման տարվա ապրիլի 1-ը՝ բացառությամբ 2016թ. հունվարի 1-ից հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցում կատարող կազմակերպությունների, որոնց համար ավարտման ժամկետ սահմանել մինչև 2016 թվականի հուլիսի 1-ը: ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հուլիսի 23-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների կողմից հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման ժամանակացույցը հաստատելու մասին» № 463-Ն հրամանի հավելվածի համաձայն՝ Նախարարության նոր համակարգին անցման հաշվետու ժամանակաշրջանի սկիզբը է սահմանվել 2016 թվականի հունվարի 1-ը: Հրաման 2-ի 3.3.1 կետի համաձայն՝ հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման ամսաթվի դրությամբ պետք է իրականացվի կազմակերպության կողմից վերահսկվող հիմնական միջոցների, ներդրումային գույքի, կենսաբանական ակտիվների, չարտադրված (բնական ծագում ունեցող) նյութական ակտիվների, բարձրարժեք ակտիվների, ռազմավարական պաշարների գնահատում: Գնահատումը պետք է իրականացվի իրական | **Ընդունված է:**<br><br>«Դիտողություններ չկան:» | **Ընթացքում է:** | **Ընդունվել է ի գիտություն** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | արժեքով: Ստանդարտի 11.29 կետի համաձայն՝ հողամասերը և շենքերը որպես ակտիվ ճանաչվելուց հետո պետք է հաշվառվեն վերագնահատված գումարով, որն իրենից ներկայացնում է դրանց իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը (շենքերի մասով), իսկ 11.30 կետի՝ հողամասերի և շենքերի վերագնահատման անցկացման ժամկետները և մեթոդաբանությունը սահմանում է հաշվապահական հաշվառումը կարգավորող լիազոր մարմինը: Նախարարության կողմից վերահսկվող հիմնական միջոցների, ներդրումային գույքի, կենսաբանական ակտիվների, չարտադրված (բնական ծագում ունեցող) նյութական ակտիվների, բարձրարժեք ակտիվների, ռազմավարական պաշարների իրական արժեքով գնահատում չի իրականացվել: Հիմնական միջոցներ դասում առկա են 0 կամ 1 դրամ հաշվեկշռային արժեք (այդ թվում նաև համախառն հաշվեկշռային արժեք) ունեցող թվով 5245 միավոր հիմնական միջոց, որից 10 միավորը՝ շահագործվող շենքեր: | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2.8 | Առկա են անհամապատասխանություններ Ստանդարտի 11.35, 11.38, 11.40 և 11.42 կետերի հետ:<br>Համաձայն Ստանդարտի՝<br>• 11.35 կետի՝ հիմնական միջոցի միավորը պետք է մաշեցվի իր օգտակար ծառայության ընթացքում, 11.38 կետի՝ հիմնական միջոցի մաշվող գումարը պետք է պարբերական հիմունքով բաշխվի դրա օգտակար ծառայության ընթացքում, 11.42 կետի՝ հիմնական միջոցի մաշվածությունը պետք է հաշվարկվի գծային մեթոդով, որը մաշվածության հավասարաչափ բաշխումն է դրա օգտակար ծառայության ընթացքում:<br>•11.40 կետի՝ ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այն վայրում և այնպիսի վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով փաստացի օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարեցվում է, երբ ակտիվն ապաճանաչվում է: Մաշվածության հաշվարկը չի դադարեցվում այն դեպքում, երբ ակտիվը գտնվում է պարապուրդի մեջ կամ հանվում է ակտիվ օգտագործումից, բացառությամբ, եթե ակտիվը ամբողջությամբ մաշեցվել է: Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի «Հանրային հատվածի կազմակերպություններում նոր հիմնական միջոցների և սկզբնական արժեքով հաշվառվող կենսաբանական ակտիվների մաշվածության հաշվարկման նորմատիվային օգտակար ծառայության ժամկետները հաստատելու մասին» № 3-Ն հրամանի հավելվածով սահմանված են նոր հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման նորմատիվային օգտակար ծառայության ժամկետները՝ ըստ տեսակների: Կատարվել են նաև թվով 2789 միավոր հիմնական միջոցների 2023 թվականի մաշվածության վերահաշվարկ՝ ըստ տեսակի: Արդյունքում պարզվել է, որ Նախարարության կողմից մի դեպքում պակաս է հաշվարկվել 71,189.93 հազ. դրամ, իսկ մյուս դեպքում՝ ավել 668.63 հազ. դրամ մաշվածության գումար: Միաժամանակ, առկա են շահագործման մեջ գտնվող, զրոյից մեծ հաշվեկշռային արժեքով թվով 24 միավոր հիմնական միջոցներ, որոնց մաշվածությունը 2023 թվականին չի հաշվարկվել: | **Ընդունված է:**<br><br>«Մաշվածության շեղումը պայմանավորած է հաշվապահական հաշվառման ներդրման փուլում օգտակար ծառայության ժամկետների (այսուհետ՝ ՕԾԺ) սահմանմամբ, որը պետք է շտկվեր վերագնահատման արդյունքում: Նշված շեղումները հնարավոր կլինի շտկել միայն ակնկալվող գույքագրման և վերագնահատման գործընթացի իրականացման փուլում՝ հաշվի առնելով, վերագնահատման ժամանակ փոփոխվող արժեքների և ՕԾԺ-ների հանգամանքը:» | **Ընթացքում է:** | **Ընդունվել է ի գիտություն** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2.9 | ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի թիվ 706-Ն որոշման հավելվածով հաստատված «Բյուջեների կատարման կարգ»-ի (Կարգ) 28-րդ կետի համաձայն «Բյուջեներով հաստատված ծախսերի մեծությունը տվյալ ծախսատեսակի կատարման համար սահմանված առավելագույն չափն է:»: Կարգի 36-րդ կետի համաձայն՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը հաստատվելուց հետո և միայն դրան համապատասխան բյուջետային ստորադաս կարգադրիչը (ԲՍԿ) իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով ստանձնելու ֆինանսական պարտավորություններ: Պայմանագրերի 1.1 կետերի համաձայն՝ տվյալ ամսվա վճարման ենթակա սուբսիդավորման տոկոսագումարները չպետք է գերազանցեն պայմանագրերի համապատասխան հավելվածերով սահմանված ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցներով նախատեսված գումարները: Հաշվետու ժամանակահատվածում Նախարարության (1022-12004) «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում», (1187-12004) «ՀՀ ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիր» և (1187-12014) «ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման նպատակով սուբսիդավորում» ծախսային միջոցառումների պլանների և ճշտված պլանների, ինչպես նաև ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցով նախատեսված հատկացումների հանրագումարը կազմել է 8,655,184.40 հազ. դրամ (տարեկան ճշտված պլանը՝ 10,901,385.40 հազ. դրամ): Նույն ժամանակահատվածում փաստացի ծախսը կազմել է 12,087,471.83 հազ. դրամ կամ պետական բյուջեով նախատեսվածից 3,432,287.43 հազ. դրամով ավելի, որը 01.10.2023թ. դրությամբ ձևակերպվել է որպես կրեդիտորական պարտք: Տվյալ ծախսային միջոցառումների պլանների, նախահաշիվների և ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցների չճշգրտման պարագայում Նախարարությունը ստանձնել է լրացուցիչ 3,432,287.43 հազ. դրամով ավելի պարտավորություններ: Առկա են անհամապատասխանություններ ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի թիվ 706-Ն որոշման 28-րդ և 36-րդ, ինչպես նաև Պայմանագրերի 1.1 կետերի պահանջների հետ՝ պայմանավորված հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջեով նախատեսված չափերից ավելի պարտավորություններ ստանձնելու հանգամանքներով: | **Ընդունված է:**<br>«ԳՖԿ-ի և ՄՖԿ-ների միջև կնքված պայմանագրերում սահմանվել է դրույթ, համաձայն որի տվյալ ծրագրի գծով գումարների բացակայության դեպքում գումարները կվճարվեն դրանց առկայության դեպքում՝ փոփոխված ժամկետներով: Քանի որ նշված ծրագրերի շրջանակներում վարկերը տրվում են մասնակից ֆինանսական կառույցների կողմից որոնք էլ հետագայում ներկայացնում են համապատասխան սուբսիդավորման հայտեր և առկա չէ որևէ սահմանաչափ թե ինչքան վարկ կարող է տրամադրվել, ուստի հնարավոր չէ կանխատեսել, թե ինչ ծավալի վարկերի կարող են տրվել հաշվետու ժամանակահատվածի ընթացքում և զսպել ավել քանակի պարտավորության ստանձնումը: Այդ հարցի լուծումը տրվել է ԳՖԿ-ի և ՖԿ-ների միջև կնքված պայմանագրերում ավելացնելով հետևյալ դրույթը՝ տվյալ ծրագրի գծով գումարների բացակայության դեպքում գումարները կվճարվեն դրանց առկայության դեպքում՝ փոփոխված ժամկետներով:<br>Հարկ է նշել, որ տարեկան կտրվածքով նշված խնդիրը բացակայում է, քանի որ կատարվել է պլանների ճշգրտում: Բացի այդ, նման իրավիճակից խուսափելու նպատակով (1022-12004) «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» և (1187-12004) «Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիր» միջոցառումների 2024-2026 և 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի հայտում վարկի պորտֆելը հաշվարկվել են միջոցառումների գծով նախորդ երկու տարիների փաստացի տրամադրված պորտֆելի միջինով: (1022-12004) «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» և (1187-12004) «Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիր» ծրագրերի մասով արձանագրված անհամապատասխանությունները վերացնելու նպատակով՝ սկսած 2024 թվականից ՄԺԾԾ հայտերում միջոցառումների գծով վարկի և լիզինգի պորտֆելները նախորդ երկու տարիների փաստացի տրամադրված պորտֆելների միջինով հաշվարկելով 2024 թվականին նման խնդիր չի առաջանա և կանխատեսվում է, որ նման անհամապատասխանություն չի արձանագրվի նաև հետագա տարիներին:» :» | **Ընթացքում է:** | **Կատարման ընթացքում է:** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2.10 | Նախարարության կողմից գույքագրում և վերագնահատում չի կատարվել, գույքային ցուցակներ և ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն չեն կազմվել և հաշվեքննություն ընդգրկող ժամանակաշրջանի ավարտի դրությամբ անցումը հաշվապահական հաշվառման նոր համակարգին ապահովված չէ:<br>Առկա են անհամապատասխանություններ «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 3-րդ և 5-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 2016թ. մարտի 17-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների հիմնական միջոցների գույքագրման և վերագնահատման մասին» թիվ 264-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի, ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ.-ի հուլիսի 23-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների կողմից հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 463-Ն հրամանի հավելվածի, Հրամանի 3.2.1, 3.2.2 և 3.4.1 կետերի պահանջների հետ: | | **Ընդունելի է մասամբ**: **Ընթացքում է:**<br>Նախարարության կողմից ներկայացված առարկությունները չեն առնչվում արձանագրված անհամապատասխանության բովանդակությանը: Արձանագրվածը վերաբերվում է ոչ թե ամենամյա գույքագրումներին, այլ՝ մինչև հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման տարվա (տվյալ դեպքում Նախարարության համար՝ մինչև 2016թ.-ի հուլիսի 1-ը) գույքագրմանը, վերագնահատմանը և դրանց արդյունքները նոր համակարգին անցնելու տարվա ֆինանսական հաշվետվություններում արտացոլմանը, որը հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածի վերջի դրությամբ չի իրականացվել: Արձանագրված անհամապատասխանությունը վերաբերվում է ոչ թե ամենամյա գույքագրումներին, այլ՝ մինչև հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման տարվա (տվյալ դեպքում Նախարարության համար՝ մինչև 2016թ.-ի հուլիսի 1-ը) գույքագրմանը, վերագնահատմանը և դրանց արդյունքները նոր համակարգին անցնելու տարվա ֆինանսական հաշվետվություններում արտացոլմանը: Նախարարության 2023թ. պետական բյուջեի ինն ամիսների հաշվեքննության իրականացման գործառույթներն ու ընթացակարգերը, կիրառելի շրջանակներն ու մեթոդաբանությունը բացառապես Հաշվեքննիչ պալատի տիրույթում են: Նշված անհամապատասխանության *(ներդրման պահի համար /2016 թվական/ վերագնահատում և ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու գործընթաց)* վերացման *իրատեսական* լինելը պարզաբանված է Հաշվեքննիչ պալատի 2023թ. պետական բյուջեի ինն ամիսների հաշվեքննության ընթացիկ եզրակացության առաջարկությունների 3-րդ կետի վերաբերյալ Նախարարության արձագանքի շրջանակներում, այն է՝ *«Անհրաժեշտ է իրականացնել ակտիվների և պարտավորությունների գույքագրում և վերագնահատում»:* Նշվածը հաշվեքննողներն ընդունելի են համարում: | **Ընդունվել է ի գիտություն** |

| Խեղաթյուրումներ | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Սույն ընթացիկ եզրակացությում արձանագրված անհամապատասխանությունները հանգեցրել են բյուջեի կատարողականի վերաբերյալ հաշվետվությունում խեղաթյուրման՝ 56,401.51 հազ. դրամի չափով: | **Ընդունված է:**<br>«ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանումը ՀՀ համայնքների կողմից 6 ամիսների վերաբերյալ ներկայացված պարզաբանումներն աշխատանքային էլեկտրոնային փոստով ներկայացրել է ՀՀ հաշվեքննիչ պալատին, իսկ 9 ամիսների անհամապատասխանություններն ամփոփվում են, որոնք ևս կներկայացվեն ՀՀ հաշվեքննիչ պալատին: Ընդհանուր 6 և 9 ամիսների վերաբերյալ պետք է իրականացվի ամփոփիչ ուսումնասիրություն համայնքների կողմից ներկայացված պարզաբանումներն ամփոփելու նպատակով: Հայտնում ենք, որ Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված անհամապատասխանությունների վերաբերյալ ցանկերը, համայնքապետարանների կողմից ներկայացված պարզաբանումները ուսումնասիրելուց հետո վերանայման կարիք ունեն, քանի որ պարզաբանումների ուսումնասիրության ընթացքում առկա են տեղեկատվությունների անհամապատասխանություններ: Հայտնում ենք, որ համայնքապետարանների կողմից ներկայացված 9 ամիսների վերաբերյալ պարզաբանումների ամփոփումը և ուսումնասիրությունը մոտենում է ավարտին և համայնքապետարանների կողմից ներկայացված պարզաբանումներից ակնհայտ է, որ այս մասով ևս առկա են տեղեկատվությունների անհամապատասխանություններ կադաստրի շտեմարանի և անշարժ գույքերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականների հետ, ուստի լրացուցիչ ուսումնասիրության անհրաժետություն է առաջանալու, որպեսզի համապատասխանող շահառուները հանվեն ներկայացված ցանքերից: Ինն ամիսների ուսումնասիրությունը ավարտելուց հետո արդյունքները անմիջապես կներկայացվեն ՀՀ հաշվեքննիչ պալատին և անմիջապես ձեռք կառնվեն համապատասխան միջոցառումներ հնարավորինս շուտ լարցուցիչ ուսումնասիրությունների գործընթացը կազմակերպելու նպատակով՝ հետագա խեղաթյուրումներից խուսափելու համար:» | **Ընթացքում է:** | **Կատարման ընթացքում է:** |
| **ԱՅԼ ՓԱՍՏԵՐ** | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | 2023թ. տարեկան պետական բյուջեի (1104-12001) «Տնտեսության արդիականացման միջոցառմանը պետական աջակցություն» ծախսային միջոցառման բյուջետայի հատկացումներից 7,879,711.92 հազ. դրամի, ինչպես նաև (1022-12004) «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծախսային միջոցառման բյուջետայի հատկացումների 3,816,494.68 հազ. դրամից 27,572.02 հազ. դրամի վերաբերյալ Նախարարությունը չի տրամադրել պահանջված ամբողջական տեղեկատվությունը՝ այն համարելով բանկային գաղտնիք և ոչ ենթակա երրորդ կողմին փոխանցման: Համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 7-ի «2023 թվականի խաղողի մթերումների գործընթացի կազմակերպման միջոցառումները հաստատելու մասին» № 1520-Լ Հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի՝ որպես աջակցության տրամադրման պայման, սահմանված է, որ տրամադրվող վարկի չափը հաշվարկվում է խաղողի գնման այն պայմանագրերով, որոնք կնքվել են մինչև 2023 թվականի հոկտեմբերի 15-ը: Որոշում 4-ի Հավելվածի 7-րդ կետով սահմանված է՝ Նախարարության և աջակցության միջոցառումներից օգտվող տնտեսվարողի միջև կնքվող համաձայնագրում նշվում է նաև, որ խաղողի մթերումներն իրականացվում են մարզպետների կողմից հաստատված ցանկերով ներկայացված խաղողագործներից, իսկ մթերվող խաղողի 1 կգ-ի նվազագույն գինը կազմում է 110 դրամ: Տվյալ ծախսային միջոցառման շրջանակում, Որոշում 4-ով սահմանված աջակցության պայմաններին անհամապատասխանության կանխման և/կամ բացահայտման նպատակով Նախարարությունում ներդրված հսկողական մեխանիզմների վերաբերյալ հարցմանն ի պատասխան, Նախարարությունն հայտնել է, որ այդ պայմանների համապատասխանության ուսումնասիրությունը վերապահված է ֆինանսական կառույցներին: Ծախսային միջոցառման շրջանակներում թվով 12 վարկերը վերոնշյալ պայմաններին համապատասխան տրամադրված լինելու մեջ հավաստիանալու նպատակով Նախարարությունից հայցվել է խաղողի գնման պայմանագրերը: Նախարարությունը հայտնել է, որ պահաջվող տեղեկատվությունը համարվում է բանկային գաղտնիք և ենթակա չէ երրորդ կողմին տրամադրելու: Հայցված տեղեկատվության բացակայությունն անհնարին է դարձնում նշված երկու ծրագրային միջոցառումների գծով 2023թ. տարեկան պետական բյուջեից հատկացված 7,907,283.94 հազ. դրամ բյուջետային միջոցների օգտագործման օրինականության գնահատումը: | **Ընդունված չէ**:<br><br>Հաշվեքննիչ պալատի կողմից պահանջվող տեղեկատվությունը ԳՖԿ-ն ստանում է մասնակից ֆինանսական կառույցներից, որոնք նշում են, որ տեղեկատվությունը հանդիսանում է բանկային գաղտնիք և ենթակա չէ տրամադրման երրորդ անձանց: Այդ իսկ պատճառով նախարարությունը չի կարողանում տրամադրել տեղեկատվությունը ՀՀ Հաշվեքննիչ պալատին:» (1104-12001) «Տնտեսության արդիականացման միջոցառմանը պետական աջակցություն» և (1022-12004) «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծախսային միջոցառման շրջանակներում շահառուների համար 3-րդ անձանց տեղեկատվություն տրամադրելու մասին պահանջ սահմանված չէ, հետևաբար պահանջվող տեղեկատվությունը հնարավոր է տրամադրել միայն շահառուների գրավոր համաձայնությունների առկայության դեպքում: | **Հաշվեքննողների պնդումը՝**<br><br>Հայցված տեղեկատվության բացակայությունը (սահմանափակումը) անհնարին է դարձրել Նախարարության (1104-12001) ծախսային միջոցառման շրջանակներում պետական բյուջեով հատկացված 7,879,711.92 հազ. դրամի և (1022-12004) ծախսային միջոցառման շրջանակներում պետական բյուջեով հատկացված 3,816,494.68 հազ. դրամի գծով 2023 թվականին սուբսիդավորման ենթակա 27,572.02 հազ. դրամի համապատասխանության գնահատումը (վարկավորված 6,175,779.79 հազ. դրամի համար):Ինչ վերաբերում է «բանկային գաղտնիք» հանդիսանալու վերաբերյալ պատճառաբանությանը, ապա՝ «Բանկային գաղնիքի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ և 6-րդ հոդվածների համաձայն՝ Նախարարությունը այդ օրենքի իմաստով երրորդ կողմ է և չի կարող հանդիսանալ բանկային գաղտնիք կրող: Բացի այդ, համաձայն Օրենքի 4-րդ հոդվածի՝ բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի վերաբերյալ ցանկացած տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ | (1022-12004) «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծախսային միջոցառման մասով հայտնում եմ, որ Էկոնոմիկայի նախարարությանը ֆինանսկան կազմակերպությունների կողմից տեղեկատվությունը տրամադրվել է Կառավարության 20219 թվականի փետրվարի 28-ի N 201-Լ որոշմամբ հաստատված Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի 33.1-ին կետի հիման վրա, իսկ «Բանկային գաղնիքի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն բանկային գաղտնիքի հրապարակում է համարվում բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները բանավոր կամ գրավոր ձևով երրորդ անձին կամ անձանց հայտնի դարձնելը, երրորդ անձանց նման տեղեկություններ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | մտադրության վերաբերյալ: Մինչդեռ, տվյալ դեպքում, բանկերի հաճախորդները կարող էին տեղյակ լինել, որ ծրագրի շահառու կարող են ճանաչվել որոշակի պահանջներին համապատասխանող հավակնորդները՝ կոնկրետ խնդիրներ լուծելու նպատակով միջոցներ ներգրավելու պարագայում և տվյալ ծրագրի շահառու ճանաչելու վերաբերյալ որոշում հնարավոր է կայացնել բացառապես հավակնորդներին վերաբերվող տեղեկությունների՝ բյուջետային ծրագրի պատասխանատու պետական մարմնում (Նախարարություն) որպես երրորդ անձ, տեղեկությունների առկայության դեպքում: Հետևաբար, պետական բյուջեով նախատեսված ծրագրային միջոցառման շահառու դառնալու հավակնություն ունեցողները չէին կարող մտադիր լինել գաղտնի պահել այն տվյալները, որոնց հիման վրա է միայն հնարավոր շառառու ճանաչելու որոշում կայացնել: | հայթայթելու հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակի ընձեռելը, այն է՝ թույլատրելը, չխոչընդոտելը կամ նման տեղեկությունների պահպանման կարգի խախտման հետևանքով այն հնարավոր դարձնելը: Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջոցառման շրջանակներում շահառուների համար երրորդ անձանց տեղեկատվություն տրամադրելու մասին պահանջ սահմանված չէ, հետևաբար պահանջվող տեղեկատվությունը հնարավոր է տրամադրել միայն շահառուների գրավոր համաձայնությունների առկայության դեպքում: |
| 2 | «Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման նպատակով փոխհատուցման տրամադրում» ծախսային միջոցառման շրջանակում Նախարարության կողմից 11311 տնտեսվարողներին 33,063.50 հա ցանքատարածության մակերեսների (սուբսիդավորված 2,788,139.94 հազ. դրամ) մասին տրամադրված տեղեկատվությունում բացակայում է ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի | **Ընդունված է:**<br>«Տես՝ նախորդիվ (2.2 ենթակետ) ներկայացված արձագանքը:» | **Ընթացքում է:** | **Շահառուների համապատասխանու-թյունը և մասնակցության ապահովումը Ծրագրով սահմանված կարգով ՀՀ համայնքապետարան-ների գործառությանի պարտականությունների տիրույթում է գտնվել, իսկ նախարարությունում** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | «Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» № 1313-Լ որոշմամբ սահմանված պահանջներին՝ միջոցառման շահառուների համապատասխանելու վերաբերյալ հիմնավորումը: | | | **առկա հանարավոր ամբողջ տեղեկատվությունը փոխանցվել է ՀՀ հաշվեքննիչ պալատին** |

Հավելված 3

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2024 **ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ** <u>**Ե Ր Ե Ք**</u> **ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ** ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ <u>**Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի**</u> ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| Թիվ | Ներկայացված առաջարկությունները | Հաշվեքննության օբյեկտի արձագանքը | Հաշվեքննողների մեկնաբանությունը | Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները |
|---|---|---|---|---|
| 3.1 | Միջոցներ ձեռնարկել պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի նախագծերի մշակման շրջանակներում պետական մարմինների բյուջետային հայտերի կազմման և ներկայացման մեթոդական ցուցումներով բյուջետային ծախսերի գնահատման համար սահմանված պահանջների կատարումն ապահովելու, այդ թվում.<br>- ըստ առանձին ծրագրային միջոցառումների արդյունքային ցուցանիշները Կառավարության որոշումներով սահմանված նպատակադրումներին համահունչ սահմանելու,<br>- բյուջետային ծախսերի իրատեսականությունն ապահովելու և բյուջեով չնախատեսված պարտավորությունների ստանձնումը բացառելու համար ծախսային պարտավորությունների գծով ծախսերի հաշվարկների հիմնավորվածությունը բարելավելու ուղղությամբ: | **Ընդունված է:**<br>«Աշխատանքներ են տարվում 2025թ. բյուջետային հայտերով ներկայացվող ծախսերի հաշվարկների հիմնավորվածությունը բավարար ներկայացնելու ուղղությամբ:: | **Ընթացքում է:** | **Բացակայում է:** |
| 3.2 | Միջոցներ ձեռնարկել ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով, ըստ առանձին բյուջետային ծրագրերի, սահմանված պահանջների կատարման մոնիթորինգ իրականացնելու ուղղությամբ: | **Ընդունված է:**<br>«Համապատասխան աշխատանքներ են իրականացվում բյուջետային ծրագրերի մեջ մոնիթորինգի իրականացման պահանջները ներառելու և հստակեցնելու ուղղությամբ:» | **Ընթացքում է:** | **Բացակայում է:** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3.3 | Միջոցներ ձեռնարկել «Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման նպատակով փոխհատուցման տրամադրում» միջոցառման շրջանակում փոխհատուցման գումարների, ինչպես նաև սուբսիդավորման ձևով ֆինանսավորվող միջոցառումների շրջանակում սուբսիդավորման ենթակա տոկոսագումարների հաշվարկների ճշտության գնահատման նպատակով հսկողական մեխանիզմներ ներդնելու ուղղությամբ: | **Ընդունված է:**<br>«Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման նպատակով փոխհատուցման տրամադրում» ծրագիրը ավարտված է և ներկայումս ուսումնասիրվում են հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ համայնքապետարանների կողմից տրված պարզաբանումները, իսկ նման ծրագիր իրականացնելու պարագայում հսկողական մեխանիզմների ներդրման վերաբերյալ **առարկություններ չկա և ընդունվում է ի գիտություն**:<br>**Կատարող՝** Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման վարչություն:» | **Ընթացքում է:** | **«Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման նպատակով փոխհատուցման տրամադրում» ծրագիրը ավարտված է և ներկայումս ուսումնասիրման փուլում են գտնվում 2023 վականի ինն ամիսների վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված անհամապատասխանությունների վերաբերյալ համայնքապետարաններից ստացված պարզաբանումների ուսումնասիրությունները, որոնք հնարավորինս սեղմ ժամկետներում կներկայացվի հաշվեքննիչ պալատին:** |
| 3.4 | Միջոցներ ձեռնարկել Հաշվապահական հաշվառման նոր համակարգին ամբողջական անցումն ապահովելու ուղղությամբ: | **Ընդունված է:**<br>«Հաշվապահական հաշվառման նոր համակարգի ամբողջական ներդրումը կապված է գույքագրման և վերագնահատման գործընթացի հետ, որն **նախատեսվում է իրականացնել** 2024 **թվականի ընթացքում**:<br>**Կատարող՝** Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչություն:» | **Ընթացքում է:** | **Բացակայում է:** |
| 3.5 | «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջի համապատասխան՝ մեկամսյա ժամկետում մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանում(ներ)ն ու կատարման ժամանակացույցը և Հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերվող այլ գրավոր տեղեկատվություն: | **Ընդունված է:**<br>«Շրջանառվում է ԷՆ նախարարի հրամանի նախագիծ յուրաքանչյուր ծրագրի գծով պատասխանատու ստորաբաժանում սահմանելու վերաբերյալ:» | **Ընթացքում է:** | **Աշխատանքները կատարման ընթացքում են:** |

Հավելված 4

| ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ **Ե Ր Ե Ք** **ԱՄԻՍՆԵՐԻ** **ԿԱՏԱՐՄԱՆ** ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ **ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ** **ԱՅԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ** ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | | |
|---|---|---|---|---|
| 4 .1 **ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | |
| *Թիվ* | **Բովանդակությունը** | **Հաշվեքննության օբյեկտի արձագանքը** | **Հաշվեքննողների մեկնաբանությունը** | **Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները** |
| 4.1.1 | Առկա է անհամապատասխանություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 29-ի № 361-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 30-րդ կետի պահանջի հետ:<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 29-ի № 361-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 30-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր շահառու պարտավոր է այգեհիմնումն | **Ընդունված է:**<br>*«Շահառուին վարկային պայմանագրի համաձայն վարկ է տրամադրվել 5 հա այգեհիմնման համար, որից 3 հեկտարը նախատեսված է եղել կարկտապաշտպան ցանցով, իսկ 2 հեկտարը՝ առանց կարկտապաշտպան ցանցի:Այգեհիմնման աշխատանքների ավարտի առավելագույնը 2 տարվա ընթացքում ժամկետը սահմանող դրույթը Որոշում 1-ի 30-րդ կետում լրացվել է 2021 թվականի օգոստոսի 27-ի N 1396-Լ որոշմամբ, որը չի տարածվում մինչ այդ այգեհիմնման հայտ ներկայացրած և վարկային պայմանագիր կնքած շահառուների վրա: Մինչդեռ ԳՖԿ-ին և ֆինանսական կառույցին համապատասխան գրություններով տեղեկացվել է այգեհիմնման աշխատանքները հնարավորինս սեղմ ժամկետներում ավարտելու անհրաժեշտության վերաբերյալ շահառուին տեղեկացնելու մասին: Միաժամանակ* | **Ընթացքում է:**<br>*«Նախարարության կողմից հաշվեքննողներին պայմանագրերը չեն ներկայացվել, արձանագրման համար հիմք է հանդիսացել մոնիթորինգի եզրակացությունը: Ինչ վերաբերում է «Ի. Ֆ.» ՍՊԸ կողմից կարկտապաշտպան ցանց տեղադրելու հարցին՝ ըստ մոնիթորինգի 07.12.2023թ. արձանագրության նշված է, որ տեղադրված է կարկտապաշտպան ցանց, սակայն ըստ նկարների և մոնիթորինգի արձանագրության լրացուցիչ տեղեկատվության կարկտապաշտպան ցանց տեղադրված* | Ի. Ֆ.» ՍՊԸ -ի տնտեսությունում 07.12.2023թ. իրականացված մոնիթորինգի արդյունքում կազմված արձանագրությունում նշված էր, որ կարկտապաշտպան ցանցի հենասյուները տեղադրված են, իսկ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ավարտել ծրագրի 37-րդ կետում նշված ընթացակարգով որպես շահառու հաշվառվելու կամ վարկային պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից առավելագույնը 2 տարվա ընթացքում:<br>Վերը նշված պահանջը չի պահպանվել (1187-12002) ծախսային միջոցառման թվով երեք շահառուների կողմից (Ցանկը տրամադրվել է Նախարարությանը): | *մոնիթորինգի իրականացման աշխապրանքների ուշացումը պայմանավորված է մոնիթորինգի աշխատանքների ժամանակավոր ընդհատմամբ: Ինչ վերաբերում է սուբսիդավորման ենթակա տոկոսագումարների հաշվարկների ճշտության գնահատմանը, ապա սուբսիդավորման ենթակա գումարների հաշվարկներն իրականացվում են ֆինանսական կառույցների կողմից և ԳՖԿ-ին ամեն ամիս ներկայացնում են սուբսիդավորման հայտեր: Քանի որ վարկերի հաշվառումը և համապատասխան տոկոսների կուտակումն իրականացվում է մասնակից ֆինանսական կառույցների կողմից, ուստի միայն նրանք կարող են ներկայացնել տոկոսադրույքների հաշվարկը: ԳՖԿ-ն ընտրանքային եղանակով իրականացնում է նաև ֆինանսական կառույցի կողմից հաշվարկված տոկոսադրույքի ստուգում, պահանջելով և ուսումնասիրելով տվյալ շահառուի վարկային հաշվի քաղվածքը: Միաժամանակ հարկ է նշել, որ նշված գործընթացն ապահովվում է ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 29-ի № 361-Լ որոշմամբ և ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի 927-Լ որոշմամբ հաստատված ծրագրերով սահմանված դրույթների համաձայն:»* (1187-**12002) ծախսային միջոցառման թվով երեք շահառուների մասով «Վերացված է:** *«Այգեհիմնման աշխատանքների ավարտի առավելագույնը 2 տարվա ընթացքում ժամկետը սահմանող դրույթը Որոշում 1-ի 30-րդ կետում լրացվել է 2021 թվականի օգոստոսի 27-ի N 1396-Լ որոշմամբ, որը չի տարածվում մինչ այդ այգեհիմնման հայտ ներկայացրած և վարկային պայմանագիր կնքած շահառուների վրա: Մինչդեռ ԳՖԿ-ին և ֆինանսական կառույցին համապատասխան գրություններով տեղեկացվել է այգեհիմնման աշխատանքները հնարավորինս սեղմ ժամկետներում ավարտելու անհրաժեշտության վերաբերյալ շահառուին տեղեկացնելու մասին:»* | *չէ: Նշված հարցերի համապատասխանությունը կարգավորող ակտերին կպարզաբանվի առաջիկա հաշվեքննության շրջանակում:»:* | ցանկը գտնվում է այգու տարածքում: |
| 4.1.2 | Առկա է անհամապատասխանություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարությաքն 2019 թվականի մարտի 29-ի № 361-Լ, 2019 թվականի ապրիլի 4-ի № 362-Լ և 2019 թվականի մարտի 7-ի № 212-Լ որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» № 927-Լ որոշմամբ հաստատված ծրագրի (այսուհետ՝ Որոշում 1) 12-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջի հետ: Համաձայն Որոշում 1-ի 12-րդ կետի 6-րդ ենթակետի՝ «Շահառուները պարտավոր են կարկտապաշտպան ցանցի ներդրումն ավարտել վարկային պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից առավելագույնը 1 | **Ընդունված է:**<br>«Կարկտապաշտպան ցանցի ներդրման աշխատանքների սահմանված ժամկետներում ավարտելու հանգամանքը հսկվում է նաև ֆինանսական կառույցների կողմից և թվով 4 շահառուների տնտեսությունում սեղմ ժամկետում մոնիթորինգ իրականացնելու, կարկտապաշտպան համակարգերի տեղադրման աշխատանքները Որոշման դրույթներին համապատասխան կատարված լինելու փաստն արձանագրելու նպատակով արդեն իսկ բուսաբուծության վարչության կողմից | **Ընթացքում է:**<br>«Մոնիթորինգի արդյունքները ուսումնասիրության կենթարկվեն հաջորդ հաշվեքննության ընթացքում:» | **Ընդունվել է ի գիտություն** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | տարվա ընթացքում:» Նախարարության (1187-12006) «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծախսային միջոցառման շրջանակներում մոնիթորինգ չի իրականացվել՝ աշխատանքները կատարված լինելու, մասնավորապես կարկտապաշտպան ցանցի ներդրման աշխատանքները սահմանված ժամկետում ավարտելու հանգամանքը պարզելու համար: Հարկ է նշել նաև, որ նշված աշխատանքները սահմանված ժամկետի ավարտին չհասցնելու դեպքում Որոշում 1-ի 23-րդ կետի 23-րդ ենթակետի համաձայն սուբսիդավորման գումարը ենթակա է վերադարձման: | սույն թվականի հունիսի 3-ին համապատասխան գրություն է ներկայացվել «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ: Շահառուների տնտեսությունում մոնիթորինգ իրականացնելու նպատակով սույն թվականի հունիսի 3-ին համապատասխան գրություն է ներկայացվել «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ, արդյունքում իրականացվել է մոնիթորինգի արդյունքների ամփոփում:» | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4.1.3 | Առկա են անհամապատասխանություններ Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ. հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիրը հաստատելու մասին» № 105-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում 2) հավելվածի 12-րդ կետի 1-ին ենթակետի և «Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի տրամադրման և աջակցության պայմանները» աղյուսակ 1-ի հետ:<br>Որոշում 2-ի հավելվածի 12-րդ կետի 1-ին ենթակետի և աղյուսակ 1-ի համաձայն լիզինգը տրամադրվում է տարեկան մինչև 14% փաստացի տոկոսադրույքով, որի մինչև 12 տոկոսային կետը սուբսիդավորվում է այնպիսի չափաքանակով, որ լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 2,0 %:<br>(1187-12003) ծախսային միջոցառման թվով վեց լիզինգի պայմնանագրերով սահմանված չափերից ավելի են հաշվարկվել և վճարվել լիզինգի տարեկան տոկոսադրույքները և սուբսիդավորվող տոկոսագումարները: (Ցանկը տրամադրվել է Նախարարությանը) | **Ընդունված է:**<br>*«Ա. Լ. ՈՒՎԿ»-ն ներկայացրել է պարզաբանում և տեղեկացրել է, որ «Տ. Ա.» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը կվերանայվի, տոկոսադրույքը կսահմանվի 14%, կկատարվի վերահաշվարկ և ավել սուբսիդավորված գումարը կվերականգնվի:*<br>*«Ք. Կ. ՈՒՎԿ» ՓԲԸ-ն ներկայացրել է պարզաբանում և տեղեկացրել է, որ Գ.Հ.-ի հետ կնքված պայմանագիրը կվերանայվի, սուբսիդավորվող տոկոսադրույքը կսահմանվի 9,5%, կկատարվի վերահաշվարկ և ավել սուբսիդավորված գումարը կվերականգնվի:*<br>*«Ք. Կ. ՈՒՎԿ» ՓԲԸ-ն ներկայացրել է պարզաբանում և տեղեկացրել է, որ Ա. Ա.-ի հետ կնքված պայմանագիրը կվերանայվի, սուբսիդավորվող տոկոսադրույքը կսահմանվի 9,5%, կկատարվի վերահաշվարկ և ավել սուբսիդավորված գումարը կվերականգնվի:*<br>*«Ք. Կ. ՈՒՎԿ» ՓԲԸ-ն ներկայացրել է պարզաբանում և տեղեկացրել, որ Բ. Ա. -ի հետ կնքված պայմանագիրը կվերանայվի, սուբսիդավորվող տոկոսադրույքը կսահմանվի 9,5%, կկատարվի վերահաշվարկ և ավել սուբսիդավորված գումարը կվերականգնվի:*<br>*«Ա. Լ. ՈՒՎԿ»ՓԲԸ-ի և «Վ.Դ.Լ.Ա.» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրերի 1.1.6 կետով տարեկան տոկոսադրույքը ծրագրի պահանջներին համահունչ սահմանվել է 14%, իսկ ինչ վերաբերվում է տարեկան փաստացի տոկոսադրույքին, ապա փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է ՀՀ ԿԲ կողմից սահմանված եղանակով, համաձայն որի փաստացի տոկոսադրույքի հաշվարկում ներառվում են նաև լիզինգառուի կողմից կատարվող լրացուցիչ այլ ծախսեր (միջնորդավճարներ, տրամադրման և սպասարկման վճարներ և այլն), որը կապ չունի սուբսիդավորման տոկոսադրույքի հետ»*<br>«Նշված 4 լիզինգային պայմանագրերի շրջանակներում ավել սուբսիդավորված գումարները ՄՖԿ-ների կողմից վերադարձվել են: Կից ներկայացվում է վճարման անդորրագրերը.<br>«*Ա. Լ. ՈՒՎԿ*»-ի և «*Տ. Ա.*» *ՍՊԸ-ի* միջև կնքված պայմանագրի շրջանակում վերականգնվել է 580,377.20 ՀՀ դրամ ավել սուբսիդավորված գումարը:<br>«*Ք. Կ. ՈՒՎԿ*» *ՓԲԸ–ի և Գ.Հ.-ի* միջև կնքված պայմանագրի շրջանակում վերականգնվել է *5,829*.90 ՀՀ դրամ ավել սուբսիդավորված գումարը:<br>«Ք. Կ. ՈՒՎԿ» ՓԲԸ- *Ա. Ա.-ի* միջև կնքված պայմանագրի շրջանակում վերականգնվել է 4,975.10 ՀՀ դրամ ավել սուբսիդավորված գումարը:<br>«Ք. Կ. ՈՒՎԿ» ՓԲԸ–ի և *Բ. Ա. -ի* միջև կնքված պայմանագրի շրջանակում վերականգնվել է 2,485.70 ՀՀ դրամ ավել սուբսիդավորված գումարը:<br>«ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի և «ՎԱԼԵ ԴԸ Լ ԱՐՓԱ» ՍՊԸ-ի միջև կնքված լիզինգի պայմանագրի շրջանակում հաշվեքննողի մեկնաբանության վերաբերյալ ԳՖԿ-ի կողմից ներկայացվել է «ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի պարզաբանումը և հիմնավորումները, որոնցից պարզ է դառնում, որ «ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի և «ՎԱԼԵ ԴԸ Լ ԱՐՓԱ» ՍՊԸ-ի միջև 21.12.2022թ. կնքված թիվ ALC00558LO պայմանագրի 1.1.6 կետով սահմանված է, որ տարեկան 14% անվանական տոկոսադրույքը հաշվարկվում է մայր գումարի մնացորդի նկատմամբ, որը արտացոլված է նաև մարումների գրաֆիկում: Քանի որ տվյալ լիզինգը գտնվում է «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի կարգավորման դաշտում, ուստի պայմանագրի 1.1.7 կետով սահմանվել է նաև տարեկան փաստացի տոկոսադրույք հասկացությունը: Լիզինգների/վարկերի տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման համար հիմք է ընդունվում «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀօրենքի 13-րդ հոդվածով սահմանված տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բանաձևը:<br>Շահառուի մարումների գրաֆիկից պարզ է դառնում, որ լիզինգի նկատմամբ հաշվարկվել է տարեկան փաստացի 14% տոկոսադրույք: Լիզինգի պայմանագիրը և մարումների գրաֆիկը կցվում է:» | **Ընթացքում է**<br>«Ա.Լ. ՈՒՎԿ» ՓԲԸ-ի և «Վ.Դ.Լ.Ա.» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրերի վերաբերյալ առարկությունը չի ընդունվում, քանի որ ՀՀ կառավարության 2022թ. հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիրը հաստատելու մասին» № 105-Լ որոշման հավելվածի 12-րդ կետի 1-ին ենթակետի գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի տրամադրման և աջակցության պայմանները սահմանված են աղյուսակ 1-ում, իսկ աղյուսակ 1-ի 4-րդ կետով սահմանված է. «տարեկան փաստացի տոկոսադրույք՝ մինչև 14 տոկոս»: Հետևաբար տոկոսադրույքը պետք է սահմանվեր այնպես, որ վերոնշյալ եղանակով հաշվարկված տարեկան փաստացի տոկոսադրույքը չգերազանցեր 14 տոկոսը:<br>«Նախարարության կողմից իրականացվող բյուջետային ծրագրի տվյալ միջոցառման իրականացնելու շրջանակում արձանագրված խնդիրը շարունակում է մնալ չլուծված» | Հաշվեքննողի կողմից արձանագրված խնդրի կարգավորման նպատակով մշակվել և շրջանառվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի N 105-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: |

| 4.2 ԱՅԼ ՓԱՍՏԵՐ | | | | |
|---|---|---|---|---|
| 4.2.1 | Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի «Բյուջեների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» № 706-Ն որոշման հավելվածի 29-րդ կետի՝ «բյուջեների ծախսերի կատարման համար պատասխանատու են բյուջետային հատկացումների կարգադրիչները (ԲԳԿ), տվյալ դեպքում՝ Նախարարությունը», իսկ համաձայն 9-րդ կետի՝ որ «ԲԳԿ-ները պատասխանատու են իրենց և ենթակա հիմնարկների ֆինանսական, տնտեսական գործունեության, հաշվապահական հաշվառման վարման համար:»:<br>Նախարարության (1187-12002), (1187-12005), (1187-12006) և (1187-12014) ծախսային միջոցառումների իրականացման նպատակը պետական աջակցության տրամադրումն է գյուղատնտեսության ոլորտի շահառուներին՝ այգեհիմնման, ցանքատարածությունների, կարկտապաշտպան ցանցի և ոռոգման արդիական համակարգի ներդրման նպատակով ֆինանսական կառույցներից ներգրաված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման եղանակով:<br>Նախարարությունը, հանդիսանալով նշված ծախսային միջոցառումների բյուջետային հատկացումների գլխավոր (ԲԳԿ) և միաժամանակ՝ ստորադաս (ԲՍԿ) կարգադրիչ, ֆինանսավորումն իրականացնում է ԳՖԿ-ի հետ կնքված «Սուբսիդիայի հատկացման մասին» պայմանագրերով (այսուհետ՝ Պայմանագրեր) սահմանված հայտերի, հաշվետվությունների հիման վրա, իսկ ֆինանսավորման ենթակա գումարների փոխանցումները կատարում է առանց սուբսիդավորման ենթակա տոկոսագումարների համապատասխան հաշվարկների և դրանց ճշտության գնահատման: | **Ընդունված չէ:**<br><br>«Սուբսիդավորման ենթակա գումարների հաշվարկներն իրականացվում են ֆինանսական կառույցների կողմից և ԳՖԿ-ին ամեն ամիս ներկայացնում են սուբսիդավորման հայտեր: Քանի որ վարկերի հաշվառումը և համապատասխան տոկոսների կուտակումն իրականացվում է մասնակից ֆինանսական կառույցների կողմից, ուստի միայն նրանք կարող են ներկայացնել տոկոսադրույքների հաշվարկը: Այն ծրագրերի մասով, որոնց մոնիթորինգն իրականացվում է ԳՖԿ-ի կողմից, ԳՖԿ-ն ընտրանքային եղանակով իրականացնում է նաև ֆինանսական կառույցի կողմից հաշվարկված տոկոսադրույքի ստուգում, պահանջելով և ուսումնասիրելով տվյալ շահառուի վարկային հաշվի քաղվածքը:<br>Հաշվեքննության ընթացքում հաշվեքննողներին ներկայացվել են տասնյակ վարկերի մասով վարկային հաշվի քաղվածքները, որտեղ հստակ երևում են տոկոսադրույքների հաշվարկները: Հաշվեքննության ընթացքում հաշվեքննողներին ԳՖԿ-ի կողմից ներկայացվել են պահանջված վարկերի մասով վարկային հաշվի քաղվածքները:» | **Հաշվեքննողների պնդումը՝**<br>Փաստացի, Նախարարությունը չի առարկում, որ ֆինանսական կառույցների կողմից իրականացվող սուբսիդավորման ենթակա գումարների հաշվարկների ճշտությունը Նախարարությունը չի ստուգում և ֆինանսավորումն իրականացվում է առանց այդ հաշվարկների վերաբերյալ տեղեկատվություններին տիրապետելու՝ հիմք ընդունելով ներկայացված հայտերում նշված գումարները:<br>Ինչ վերաբերում է հաշվեքննության ընթացքում տասնյակ վարկերի մասով վարկային հաշվի քաղվածքներ հաշվեքննողներին ներկայացնելուն, հարկ է նշել, որ Նախարարության կողմից հաշվեքննողներին որևէ վարկային հաշվի քաղվածք չի ներկայացվել:<br><br>Նախարարության (1187-12002), (1187-12005), (1187-12006) և (1187-12014) ծախսային միջոցառումների մասով հաշվեքննողներին ինչպես Նախարարության, այնպես էլ ԳՖԿ-ի կողմից չեն տրամադրվել վարկերի մասով հայցված վարկային հաշվի քաղվածքները: | Տոկոսադրույքի հաշվարկն իրականացնում են ֆինանսական կառույցները, վարկի տրամադրման պահից ՄՖԿ-ներն իրականացնում են տոկոսների կուտակում յուրաքանչյուր օր և ամսվա կտրվածքով ամփոփում և ԳՖԿ-ին են ներկայացնում սուբսիդավորման հայտերը՝ նշելով հաշվետու ամսվա ընթացքում սուբսիդավորման ենթակա տոկոսագումարի չափը: Շտեմարանում կամ հաշվետվություններում որևէ բանաձևի միջոցով հնարավոր չէ ներկայացնել տոկոսագումարի հաշվարկը, քանի որ այն կուտակվում է յուրաքանչյուր օր՝ հաշվի առնելով վարկի մնացորդը: Քանի որ վարկային պորտֆելի հաշվառումը ըստ վարկառուների իրականացվում է ՄՖԿ-ների կողմից, ուստի տոկոսադրյուքի հաշվարկի իրականացումը կարող է կատարվել միայն ՄՖԿ-ների կողմից: Նույն վարկի գումարի պարագայում սուբսիդավորված գումարների մեծությունը կարող է տարբերվել, հաշվի առնելով այն, թե քանի օր է կուտակվել տոկոս: Ինչ վերաբերում է վարկերի մասով հայցված վարկային հաշվի քաղվածքների Նախարարության և ԳՖԿ-ի կողմից չտրամադրմանը, ապա հայտնում ենք, որ աշխատանքային կարգով և գրությամբ ներկայացված բոլոր կետերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը Նախարարության և ԳՖԿ-ի կողմից տրամադրվել է հաշվեքննողներին: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4.2.2 | Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել է ԳՖԿ-ի կողմից Նախարարությանը տրամադրված տեղեկատվությունը և ցուցանիշները, որոնք նախատեսված են Որոշում 1-ի, ինչպես նաև Պայմանագրերի հավելվածներում սահմանված հաշվետվություններում: Հաշվետվություններում սահմանված չեն.<br>• Արդյո՞ք շահառուներն այգեհիմնումն իրականացվում են կարկտապաշտպան ցանցով, թե՝ առանց կարկտապաշտպան ցանցի:<br>• Արդյո՞ք այգեհիմնումն իրականացվել է տեղական, թե ոչ տեղական արտադրության տնկանյութերով:<br>• ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում հետևյալ շահառուներին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.12.2014թ. № 1444-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի տնտեսավարողներին, գյուղատնտեսական կոոպերատիվներին, զինվորական ծառայության պարտականությունների կատարման ժամանակ մարտական հերթապահության կամ գործողությունների իրականացման արդյունքում հաշմանդամ դարձած քաղաքացիներին, գյուղատնտեսությունում տնտեսավարող երիտասարդներին (18-35 տարեկանը չլրացած ֆիզիկական անձանց) նախատեսվում է 2% կետով ավելի սուբսիդավորում: Սակայն ներկայացված հաշվետվություններում նշված չէ, թե առավելագույն չափով պետական աջակցությամբ սուբսիդավորումը տվյալ շահառուին որ արտոնյալ պայմանի բավարարումով է տեղի ունենում:<br>Բացի այդ, նշված հաշվետվություններում կոնկրետ շահառուների կողմից հիմնված այգիները ներկայացված են ընդհանուր մակերեսով, առանց առանձնացնելու տարբեր տեսակի տնկանյութերով (ինտենսիվ /հնդավոր, կորիզավոր, և չոր մերձարևադարձային/ ինտենսիվ /ընկուզավոր/, խաղող և հատապտղային) հիմնված այգիների մակերեսները: Որոշում 1-ով սահմանված կարգով նշված տարբեր տեսակի տնկանյութերով հիմնված այգիների համար վարկերի տոկոսադրույթների սուբսիդավորման հաշվարկները և փոխհատուցման չափերը տարբեր են, դրանք արտացոլված են նաև ֆինանսական կառույցների (այսուհետ՝ ՖԿ) և շահառուների միջև կնքված վարկային պայմանագրերում՝ որպես այգեհիմնման 1 հեկտարի ծախսի դիմաց փոխհատուցման առավելագույն գումարներ: Արդյունքում վերոնշված պայմանների վերաբերյալ նշումների բացակայությամբ, ինչպես նաև տարբեր շահառուների մասով թերի կամ | **Ընդունված չէ:**<br>«ԳՖԿ-ի կողմից նախարարությանը ներկայացվող հաշվետվություններում սահմանված են հիմնվող այգիների մակերեսները, մասնավորապես, եթե նշված է ինտենսիվ այգու հիմնում, ուստի պարտադիր այն իր մեջ ներառում է նաև կարկտապաշտպան ցանց: Ինչպես նաև 2024թ . 2-րդ եռամսյակից սկսած նախարարության պահանջով հաշվետվություններում արդեն իսկ նշումներ դաշտում նշվում է սուբսիդավորված տոկոսադրույքի կիրառված արտոնության հիմքը՝ սահմանամերձ, երիտասարդ տնտեսավարող, մարտական գործողությունների արդյունքում հաշմանդամ և այլն հանդիսանալու մասին տեղեկատվությունը: Միաժամանակ կրկին Նախարարության պահանջով հաշվետվությունում առանձնացվում են հիմնվող այգիների մակերեսը՝ ըստ պտղատեսակների:» 4.2.1-4.2.7-**րդ** կետերով արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ՝ կապված 1 հա հաշվով կատարված ծախսերի գերազանցմանը ծարգրով սահմանվածին, ապա Հայաստանի Հանրապետության կառավարության 03.06.2021 թվականի N 927-Լ որոշման 23-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն սահմանված է, որ 1 հա-ի հաշվարկով ծախսը կարող է գերազանցել Որոշմամբ սահմանված սահմանաչափին մինչև 10 %-ի չափով, իսկ արձանագրված շեղումներն բոլոր դեպքերում կազմում են մինչև 10 %: Նախարարության կողմից 2024 թվականի հունիսի 10-ին ԳՖԿ գրություն է ներկայացվել տեղեկատվությունում՝ հիմնվող այգիների մակերեսները ըստ պտղատեսակների, իսկ միաժամանակ ջրավազանի և/կամ լարային համակարգի և/կամ կարկտապաշտպան ցանցի (համապատասխան մակերեսներով) վերաբերյալ տվյալները ներառելու մասին: Հարկ է նշել, որ հիմնվող այգիների մակերեսները ըստ պտղատեսակների արդեն | **Հաշվեքննողների պնդումը՝**<br>ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի № 927-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 16-րդ կետով և ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 29-ի № 361-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետով սահմանվել են այգեհիմնման ծախսերի հաշվարկների առավելագույն սահմանաչափերը, ինչպես կարկտապաշտպան ցանցով, այնպես էլ առանց դրա: Հետևաբար, այգեհիմնման մեջ կարկտապաշտպան ցանցի ներառված լինելը պարտադիր պայման չէ, և դրա վերաբերյալ տեղեկատվությունն անհրաժեշտ է պայմանագրերի գների հաշվարկների ճշտությունը պարզելու համար:<br>Ինչ վերաբերում է Նախարարության պահանջով 2024թ. 2-րդ եռամսյակից սկսած հաշվետվություններում արդեն իսկ ներկայացվող տեղեկատվությանը, ապա դրա համապատասխանությունը իրավական ակտրով սահմանված պահանջներին կպարզաբանվի առաջիկա հաշվեքննության շրջանակում:<br>Պայմանագրերի գների հաշվարկների առավելագույն սահմանաչափերի գերազանցումը մինչև 10% չափով վերաբերում է միայն ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի № 927-Լ որոշմամբ հաստատված ծրագրին, իսկ ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 29-ի № 361-Լ և 2019 թվականի ապրիլի 4-ի № 362-Լ որոշումներով հաստատված ծրագրերի՝ 1187-12002 և 1187-12006 ծախսային միջոցառումների համար նման պայման սահմանված չի եղել: | **Ընդունվել է ի գիտություն:**<br>ԳՖԿ-ների կողմից ներկայացվող հաշվետվություններում արդեն իսկ ընդգրկված է համապատասխան տեղեկատվությունը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | տեղեկատվության ոչ ամբողջական ներկայացված լինելու պատճառով հաշվետվությունները, մասնավորապես՝ վարկային պայմանագրերի գումարները, շահառուներին տրամադրվող աջակցության չափերի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սուբսիդավորվող գումարների, հաշվարկները և դրանց ճշգրտության վերաբերյալ գնահատումը դառնում է անհնարին:<br>Նախարարության հաշվետու ժամանակաշրջանի (1187-12002), (1187-12006) և (1187-12014) ծախսային միջոցառումների մասերով հաշվեքննության արդյունքում արձանագրվել են. | իսկ ներառված են հաշվետվություններում:»<br>**4.2.2.1 ենթակետի մասով՝** ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 29-ի № 361-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝յուրաքանչյուր շահառուի համար սահմանված մեկ հեկտար այգեհիմնման աշխատանքների և 1 տարվա խնամքի ծախսերի առավելագույն սահմանաչափերը կարկտապաշտպան ցանցով (շահառուի հայեցողությամբ) և առանց դրա՝<br>ա. եթե այգեհիմնումն իրականացնում է կապալառու կազմակերպությունը՝<br>● խաղողի այգի՝ 10.8 մլն դրամ, կարկտապաշտպան ցանցով՝ 14.4 մլն դրամ,<br>● ինտենսիվ պտղատու այգի՝ 18.7 մլն դրամ, կարկտապաշտպան ցանցով՝ 24.8 մլն դրամ,<br>● հատապտղանոց՝ 23.2 մլն դրամ, կարկտապաշտպան ցանց նախատեսվածչէ,<br>բ. Եթե այգեհիմնումն իրականացնում է շահառուն՝<br>● խաղողի այգի՝ 8.6 մլն դրամ, կարկտապաշտպան ցանցով՝ 11.5 մլն դրամ,<br>● ինտենսիվ պտղատուայգի՝ 14.9 մլն դրամ, կարկտապաշտպան ցանցով՝ 19.8 մլն դրամ,<br>● հատապտղանոց՝ 18.6 մլն դրամ, կարկտապաշտպան ցանց նախատեսված չէ: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4.2.2 | 4.2.2.1 (1187-12002) ծախսային միջոցառման մասով՝ «Ա. Վ.» ՍՊԸ, 18 հա, խաղող, այգեհիմնումն իրականացրել է կապալառու կազմակերպության կողմից և առանց կարկտապաշտպան ցանցի, որի վերաբերյալ առկա է 08.12.2023թ. մոնիթորինգի արձանագրությունը: Հետևաբար, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 29-ի № 361-Լ որոշմամբ հաստատված ծրագրի պայմանների համաձայն վարկի առավելագույն գումարը կկազմի 18 X 10,8 = 194,4 մլն. դրամ, մինչդեռ ըստ հաշվետվությունների տվյալ շահառուի պայմանագրի գումարը 205.0 մլն. դրամ է, այսինքն հաշվարկային գումարից ավել՝ 10.6 մլն. դրամ:<br>4.2.2.2 (1187-12002) ծախսային միջոցառման մասով՝<br>**ա/** «Գ...» ՍՊԸ շահառուի մի պայմանագրի դիմաց նշվել է՝ կեռաս, նեկտարին, խաղող, նույն շահառուն մեկ այլ պայմանագրի դիմաց՝ ազնվամորի, տանձ, որոնց վարկային պայմանագրերի գումարները ստացվում են տարբեր փոփոխականների կամ ցուցանիշների արտադրյալից: Հաշվետվություններում տարրանջատված չեն ըստ պտղատեսակների հիմնված այգիների մակերեսները և կարկտապաշտպան ցանցի առկայությունը:<br>**բ/** «Գ...» ՍՊԸ շահառուի մեկ այլ պայմանագրի դիմաց նշվել է 3,6 հա խնձորի այգի, պայմանագրի գումարը՝ 138,420.0 հազ. դրամ (138,420.0 / 3,6 = 38,450 հազ. դրամ 1 հեկտարի համար հաշվարկված ծախսը): Վարկային պայմանագրի կնքման պահին գործող իրավական կարգավորումով 1 հեկտար ծախսի հաշվարկը եղել է՝ ինտենսիվ պտղատու այգի՝ հնդավորներ, կորիզավորներ և չոր մերձարևադարձայիններ՝ 30.3 մլն դրամ, կարկտապաշտպան ցանցով՝ 40.5 մլն դրամ: Հնարավոր չէ պարզել կարկտապաշտպան ցանցի առկայությունը:<br>(1187-12014) ծախսային միջոցառման մասով՝<br>4.2.2.3 «Ա...» ՍՊԸ շահառուի դիմաց նշվել է 59 հեկտար, դեղձի այգի, պայմանագրի գումարը՝ 2,478,000.0 հազ. դրամ (2,478,000.0 / 59 = 42,000 հազ. դրամ 1 հեկտարի համար հաշվարկված ծախսը): Սակայն այս տեսակի այգու համար ըստ ժամանակի տվյալ պահին գործող պայմանների դեպքում առավելագույն գումարը 1 հեկտար տարածքի համար պետք է կազմեր 40,500 հազ. դրամ:<br>4.2.2.4 «Ա...» ՍՊԸ շահառուի դիմաց նշվել է 200 հեկտար, նեկտարինի այգի, պայմանագրի գումարը՝ 8,540,000.0 հազ. դրամ (8,540,000.0 / 200 = 42,700 հազ. դրամ 1 հեկտարի համար հաշվարկված ծախսը): Սակայն այս տեսակի այգու համար ըստ ժամանակի տվյալ պահին գործող պայմանների դեպքում առավելագույն գումարը 1 հեկտար տարածքի համար պետք է կազմեր 40,500 հազ. դրամ:<br>4.2.2.5 (1187-12006) ծախսային միջոցառման «Ս. Մ.» շահառուի դիմաց նշվել է 0,8185 հեկտար, խաղողի այգի, պայմանագրի գումարը՝ 4,600.0 հազ. դրամ (4,600.0 / 0,8185 = 5,620.0 հազ. դրամ 1 հեկտարի համար հաշվարկված ծախսը): Սակայն տվյալ այգու 1 հեկտար տարածքի համար կարկտապաշտպան ցանցի ներդրումը պետք է կազմեր 2,880.0 հազ. դրամ (2,880.0 * 0,8185 = 2,357.3 հազ. դրամ 1 հեկտարի համար հաշվարկված ծախսը): Տարբերությունը՝ 2,242.7 հազ.դրամ:<br>4.2.2.6 (1187-12006) ծախսային միջոցառման «Գ. Ֆ.» ՍՊԸ շահառուի դիմաց նշվել է 1,2 հեկտար, խնձորի այգի, պայմանագրի գումարը՝ 20,000.0 հազ. դրամ (20,000.0 / 1,2 = 16,666.7 հազ. դրամ 1 հեկտարի համար հաշվարկված ծախսը): Սակայն տվյալ այգու 1 հեկտար տարածքի համար կարկտապաշտպան ցանցի ներդրումը պետք է կազմեր 8,500.0 հազ. դրամ: Տարբերությունը՝ 9,800.0 հազ. դրամ:<br>4.2.2.7 (1187-12006) ծախսային միջոցառման մասով՝ «Թ. Մ.» շահառուի դիմաց նշվել է 1,04 հեկտար, խնձորի այգի, պայմանագրի գումարը՝ 10,600.0 հազ. դրամ (10,600.0 / 1,04 = 10,192.3 հազ. դրամ 1 հեկտարի համար հաշվարկված ծախսը): Սակայն տվյալ այգու 1 հեկտար տարածքի համար կարկտապաշտպան ցանցի ներդրումը պետք է կազմեր 8,500.0 հազ. դրամ:<br>Տարբերությունը՝ 1,760.0 հազ. դրամ:<br>*Կնքված պայմանագրերի գումարների գերազանցումը բոլոր հնարավոր դեպքերում պայմանագրի գումարի առավելագույն սահմանաչափից (որը հավասար է 1 հեկտարի համար սահմանված ծախսերի առավելագույն սահմանաչափի ու տվյալ տարածքի հեկտարի արտադրյալ) առկա է մի շարք այլ շահառուների դեպքում ((1187-12014) ծախսային միջոցառման մասով՝ «Ա.» ՍՊԸ, «Ն. Պ.» ՍՊԸ, «Թ. Ա.» ՍՊԸ, «Է. Ս.Գ.» ՍՊԸ, «Գ.» ՍՊԸ, «Ն.» ՍՊԸ, «Վ. Ա .» ՓԲԸ, «Ա.» ՍՊԸ, «Ֆ.» ՍՊԸ, «Վ.» ՍՊԸ, «Է. Ջ. Ք.Ա.» ՍՊԸ և այլն):* | **4.2.2.2 ենթակետի մասով՝ Վերացված է:**<br>«Գ...» ՍՊԸ-ի կողմից այգեհիմնումն իրականացված է կարկտապաշտպան ցանցով, հետևաբար հաշվարկներն իրականացված են վերը նշված սահմանաչափով:<br>*«Նախարարության կողմից 2024 թվականի հունիսի 10-ին ԳՖԿ գրություն է ներկայացվել տեղեկատվությունում՝ հիմնվող այգիների մակերեսները ըստ պտղատեսակների, իսկ միաժամանակ ջրավազանի և/կամ լարային համակարգի և/կամ կարկտապաշտպան ցանցի (համապատասխան մակերեսներով) վերաբերյալ տվյալները ներառելու մասին: Հարկ է նշել, որ հիմնվող այգիների մակերեսները ըստ պտղատեսակների արդեն իսկ ներառված են հաշվետվություններում:»*<br>4.2.2.3-**4.2.2.4 ենթակետերի մասով՝ Վերացված է:**<br>«4.2.2.3-4.2.2.4 կետերով նշված արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկացվում է, որ պայմանագրերի գների հաշվարկների առավելագույն սահմանաչափերի գերազանցումը մինչև 10% չափով սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի № 927-Լ որոշմամբ հաստատված ծրագրով:»<br>**4.2.2.5 ենթակետի մասով՝ Ընթացքում է:**<br>«Ֆինանսական կառույցի կողմից ավել սուբսիդավորված գումարի տարբերությունը ետ կվերադարձվի, որի ուղղությամբ ԳՖԿ-ի կողմից արդեն իսկ ձեռնարկվել են միջոցառումներ:»<br>**4.2.2.6 ենթակետի մասով՝ Վերացված է:**<br>«Ֆինանսական կառույցի կողմից տեխնիկական վրիպակով պայմանավորված ներկայացված տեղեկատվության մեջ առկա էր անհամապատասխանություն՝ 2,5 հա-ի փոխարեն նշվել էր 1,2 հա:»<br>**4.2.2.7 ենթակետի մասով՝ Վերացված է:**<br>«Ֆինանսական կառույցի կողմից տեխնիկական վրիպակով պայմանավորված ներկայացված տեղեկատվության մեջ առկա էր անհամապատասխանություն՝ 1,25 հա-ի փոխարեն նշվել էր 1,04 հա:» | 4.2.2.1 - **4.2.2.7 ենթակետերի մասով՝**<br>Արձանագրված հարցերին անդրադարձ կկատարվի 2024թ. առաջիկա հաշվեքննությունների ընթացքում: | **Ընդունվել է ի գիտություն** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4.2.3 | «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 41.5 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «2. Կառավարության բյուջետային ուղերձի կազմում բերված, ինչպես նաև պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված ծրագրերի և միջոցառումների գծով կառավարության սահմանած արդյունքային (կատարողական) ցուցանիշները ներկայացնող հավելվածը յուրաքանչյուր պետական մարմնի գծով բաղկացած է երկու մասից, ընդ որում՝<br>1) առաջին մասում ներկայացվում է յուրաքանչյուր պետական մարմնի ռազմավարական նպատակների համառոտ շարադրանքը.<br>2) երկրորդ մասում ներկայացվում են պետական մարմնի կողմից իրականացվող ծրագրերի միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշները:»:<br>Սակայն վերոնշված հավելվածում բացակայում են հաշվեքննության ենթակա ծախսային միջոցառումների գծով արդյունքային որակական և քանակական չափորոշիչները/ ցուցանիշները, որոնք սահմանվել են ծախսային մ<br>4.2.3.1 (1187-12002) ծախսային միջոցառման գծով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.03.2019թ. № 361-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 42-րդ կետում նշված ծրագրի թիրախներ են՝<br>ա) Տարեկան նոր հիմնված այգիներ, ըստ այգու տեսակների՝ խաղող, ինտենսիվ պտղատու այգի, հատապտղանոց:<br>բ) Շահառուների այգիներից ստացած տարեկան եկամտի աճ:<br>գ) Շահառուների կողմից վճարած հարկերից ՀՀ պետական բյուջեի ավելացած մուտքեր:<br>դ) Այգիների հիմնումից լրացուցիչ ստեղծված աշխատատեղերի քանակի ավելացում:<br>Բացի այդ, ՀՀ 2024 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի կատարման հաշվետվության, մասնավորապես՝ միջոցառումների արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ համապատասխան հավելվածով ներկայացված աղյուսակում (1187-12002) ծախսային միջոցառման որպես արդյունքային չափորոշիչ կամ ցուցանիշ նշվել է՝ «Ծրագրի շրջանակներում նախորդ տարիներին հիմնված նոր ինտենսիվ պտղատու այգիներ, հեկտար» տողը, որի տարեկան ճշտված պլանը՝ 1445.4, իսկ փաստացին՝ 1400, սակայն չի նշվել, թե քանի այգիներ են հիմնվել ըստ տեսակների (խաղող, ինտենսիվ պտղատու այգի, հատապտղանոց) և քանի շահառուներ են ծրագրից օգտվել:<br>4.2.3.2 Նախարարության (1187-12005) ծախսային միջոցառման գծով Հայաստանի Հանրապետության կառավարության 07.03.2019թ. № 212-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 29-րդ կետում նշված ծրագրի թիրախներ են՝<br>ա) Տարեկան՝ ոռոգման արդիական համակարգերով ավելացած տարածքներ, ըստ ոռոգման տեսակի՝ կաթիլային և անձրևացման տարբերակով,<br>բ) Ոռոգման նոր համակարգի ներդրման արդյունքում ջրի խնայողության ցուցանիշների բարելավում տվյալ տարածքներում,<br>գ) Բերքատվության աճ: | **Ընդունված է:**<br>«Ծրագրի շրջանակներում թվով 88 շահառուների կողմից ներկայացվել է ընդհանուր առմամբ 1445,4 հա այգեհիմնման հայտ, որից՝ ֆինանսական կառույցների հետ հետագա ճշգրտումների և մոնիթորինգի արդյունքում փաստացի այգեհիմնման մակերեսը կազմել է շուրջ 1400 հա:» Միջոցառման շրջանակում ոռոգման համակարգերով ներդրված տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 968.8 հա, (թվով 60 շահառուի հետ ծրագրի շրջանակում կնքվել է վարկային պայմանագրեր), իսկ 507.9 հա որպես փաստացի ցուցանիշ նշվել է պայմանավորված այն հանգամանքով, որ շահառուները վարկային պարտավորությունները մարել են ժամկետից շուտ և սուբսիդավորման են ենթակա 507.9 հա մակերեսի համար մնացած առկա վարկային պարտավորությունները:»<br>Արդյունքային ցուցանիշ է համարվում կարկտապաշտպան ցանցի տեղադրման մակերեսը (հեկտար):<br>Միջոցառումների արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ համապատասխան ձևաչափում նման չափորոշիչի կամ ցուցանիշի վերաբերյալ սյունակ ներառված չէ, առաջիկայում կներկայացվի: Անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն արձանագրվել:<br>4.2.3.1 **ենթակետի մասով՝ Վերացված է:**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 29.03.2019թ. № 361-Լ որոշման իրականացման արդյունքում որպես չափելի ցուցանիշ կարող է նշվել նոր հիմնվող կամ հիմնված ինտենսիվ այգու մակերեսը, իսկ ծրագրով նշված մյուս թիրախները բխում են այդ ցուցանիշից, հաշվի առնելով նաև, որ ինտենսիվ տեխնոլոգիայով մշակվող այգիներում բերքատվությունը և բերքի որակը ավելի բարձր է:»<br>4.2.3.2 **ենթակետի մասով՝ Վերացված է:**<br>«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ծրագիրը ավարտվել է 2021 թվականին և վարկային միջոցները հատկացված են եղել 968,8 հա-ի համար, նոր վարկային միջոցներ չեն տրամադրվել, հետևաբար նոր արդյունքային ցուցանիշներ չեն պլանավորվել, փոխարենը ԳՖԿ-ից ներկայացված տեղեկատվության հիման վրա ըստ տարիների պլանավորվել է առկա վարկային պարտավորություններին համապատասխան սուբսիդավորման ենթակա գումարները:» | **Ընթացքում է**<br>ՀՀ կառավարության 29.03.2019թ. № 361-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 42-րդ կետով սահմանվել են ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները, արդյունքային ցուցանիշները, չափորոշիչները, որոնք ներկայացված կամ սահմանված չեն ծրագրային բյուջետավորման համապատասխան աղյուսակներում: Այդ պատճառով բյուջեների հաշվետվություններով չեն ներկայացվում ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքների վերաբերյալ որակական և քանակական ցուցանիշները: ՀՀ կառավարության 07.03.2019թ. № 212-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 29-րդ կետով սահմանվել են ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները, արդյունքային ցուցանիշները, չափորոշիչները, որոնք ներկայացված կամ սահմանված չեն ծրագրային բյուջետավորման համապատասխան աղյուսակներում: Այդ պատճառով բյուջեների հաշվետվություններով չեն ներկայացվում ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքների վերաբերյալ որակական և քանակական ցուցանիշները: ՀՀ կառավարության 04.04.2019թ. N 362-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 34-րդ կետով սահմանվել են ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները, արդյունքային ցուցանիշները, չափորոշիչները, որոնք ներկայացված կամ սահմանված չեն ծրագրային բյուջետավորման համապատասխան աղյուսակներում: Այդ պատճառով բյուջեների հաշվետվություններով չեն ներկայացվում ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքների վերաբերյալ որակական ցուցանիշները: ՀՀ կառավարության 29.03.2019թ. № 361-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 42-րդ կետով, ՀՀ կառավարության 07.03.2019թ. № 212-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 29-րդ կետով, ՀՀ կառավարության 04.04.2019թ. N 362-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 34-րդ կետով, 1.2 ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի № 927-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 37-րդ կետով սահմանվել են ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները, արդյունքային ցուցանիշները, չափորոշիչները, որոնք ներկայացված կամ սահմանված չեն ծրագրային բյուջետավորման համապատասխան աղյուսակներում: Այդ պատճառով բյուջեների հաշվետվություններով չեն ներկայացվում ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքների վերաբերյալ որակական և քանակական ցուցանիշները:<br>**Փաստորեն, նշված ծախսային միջոցառումների գծով վերոհիշյալ արդյունքային ցուցանիշների բացակայությամբ պայմանավորված փաստացի կատարված ծախսերի դիմաց ստացված արդյունքները հնարավոր չէ գնահատել:** | **Ընդունվել է ի գիտություն** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4.2.3 | Հիշատակված ծախսային միջոցառման համար ՀՀ 2024 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի կատարման հաշվետվության, մասնավորապես՝ միջոցառումների արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ համապատասխան հավելվածով ներկայացված աղյուսակում (1187-12005) ծախսային միջոցառման որպես արդյունքային ցուցանիշ նշվել է՝ «Ծրագրի շրջանակներում նախորդ տարիներին ներդրված՝ սուբսիդավորվող ոռոգման արդիական համակարգերով տարածքներ, հա», որի տարեկան ճշտված պլանը՝ 968,8 հա իսկ փաստացին նշվել է 507,9 հա, սակայն չի նշվել, թե քանի այգու կամ շահառուի համար նոր համակարգեր են ներդրվել:<br>4.2.3.3 Նշված ծախսային միջոցառման արդյունքային միակ չափորոշիչ է նշվել՝ նախորդ տարիներին տեղակայված՝ սուբսիդավորվող կարկտապաշտպան ցանցային համակարգեր, հա, որի տարեկան ճշտված պլանը և հաշվետու ժամանակահատվածում փաստացի ցուցանիշը 117,8 հեկտար է:<br>4.2.3.4 Նախարարության (1187-12014) ծախսային միջոցառումն ըստ էության նախորդ երեք (1187-12002), (1187-12005) և (1187-12006) ծախսային միջոցառումների շարունակությունն է այն տարբերությամբ, որ պետական աջակցության տրամադրման ՀՀ կառավարության ուժը կորցրած որոշումներով սահմանված կարգերի փոխարեն գործում է ՀՀ կառավարության նոր որոշմամբ սահմանված մեկ ընդհանուր կարգ՝ որոշ լրացումներով և խմբագրումներով: Բացի այդ, Որոշում 1-ի 37-րդ կետով սահմանված են ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները, սակայն ՀՀ պետական բյուջեի մասին իրավական ակտերի՝ ոչ ֆինսական արդյունքային (կատարողական) չափորոշիչներն ու ցուցանիշները սահմանող համապատասխան հավելվածներում ծրագրի ակնկալվող արդյունքների վերաբերյալ չափորոշիչներն ու ցուցանիշները բացակայում են: Նախարարության (1187-12015) ծախսային միջոցառման գծով արդյունքային չափորոշիչներ են սահմանվել՝<br>1) Ծրագրի շրջանակներում հիմնված նոր ինտենսիվ պտղատու այգիներ, հեկտար (տարեկան ճշտված պլանը՝ 45,4 հաշվետու ժամանակահատվածի պլանը՝ 0, փաստացին՝ 0):<br>2) Ոռոգման արդիական համակարգերով ներդրված տարածքներ, հեկտար (տարեկան ճշտված պլանը՝ 108,6, հաշվետու ժամանակահատվածի պլանը՝ 0, փաստացին՝ 8,89):<br>Առաջին արդյունքային չափորոշիչի վերաբերյալ հարկ է նշել, որ Որոշում 1-ով սահմանված կարգի 13-րդ կետի համաձայն՝ «Նոր ինտենսիվ պտղատու այգիներ հիմնելու համար կատարված ծախսերի մասնակի փոխհատուցում չի նախատեսվում:» | **Ընդունված է:**<br>4.2.3.3 **ենթակետի մասով՝ Վերացված չէ:**<br>«ՀՀ կառավարության 04.04.2019թ. N 362-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 34-րդ կետի համաձայն ծրագրի իրականացումից ակնկալվում են ինչպես քանակական, այնպես էլ որակական արդյունքներ: Մասնավորապես, ծրագրով նախատեսված թիրախային քանակությունն ապահովվելու դեպքում առաջիկա 7 տարվա ընթացքում ակնկալվում են հետևյալ արդյունքները՝<br>***<u>քանակական</u>***<br>1) կսուբսիդավորվի 250 հա պտղատու և խաղողի այգիներում կարկտապաշտպան ցանցերի տեղակայման նպատակով տրամադրված վարկերի տոկոսադրույքը<br>***<u>որակական</u>***<br>1) կարկտապաշտպան ցանցեր տեղակայած շահառուների մոտ գրեթե կբացառվի կարկուտի ռիսկը, կբարելավվի բերքի որակը, կավելանան շահառուների եկամուտները.<br>2) նախադրյալ կհանդիսանա այլ տնտեսություններում տվյալ տեխնոլոգիայի ներդրման համար.<br>3) նշված տնտեսությունների համար կբարձրանա ապահովագրության համար գրավչությունը.<br>4) էականորեն կնվազեն բանկերի և վարկային կազմակերպությունների ռիսկերը.<br>5) նախադրյալներ կստեղծվի ընդլայնված ծավալներով ծրագրի իրականացման համար:<br>Ելնելով վերոգրյալից, ծրագրի իրականացման արդյունքում որպես արդյունքային չափելի ցուցանիշ նշվում է համապատասխան մակերեսով այգու վրա ներդրված կարկտապաշտպան ցանցի մակերեսը, իսկ որակական արդյունքները բխում են նշված ցուցանիշից:»<br>4.2.3.4 **ենթակետի մասով՝ Վերացված չէ:**<br>*«ՀՀ կառավարության 29.03.2019թ. № 361-Լ որոշմամբ, ՀՀ կառավարության 07.03.2019թ. № 212-Լ որոշմամբ, ՀՀ կառավարության 04.04.2019թ. N 362-Լ որոշմամբ, ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի № 927-Լ որոշմամբ հաստատված ծրագրերի իրականացման* արդյունքում որպես արդյունքային չափելի ցուցանիշ նշվում է համապատասխան հիմնված կամ հիմնվող այգիների, ներդրված կարկտապաշտպան ցանցի կամ ոռոգման արդիական համակարգի մակերեսը, որոնցից բխում են ծրագրերով նշված մյուս ցուցանիշները: | **Ընթացքում է**<br><br>4.2.3.1 - 4.2.3.4 **ենթակետերի մասով՝**<br>Անհամապատասխանությունների **կատարման** վերաբերյալ հարցին անդրադարձ կկատարվի 2024թ. առաջիկա հաշվեքննությունների ընթացքում: | **Ընդունվել է ի գիտություն** |